ՈՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԹԻՒ Դ. ՏԱՐԻ Ի. ԱՊՐԻԼ 30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց Կ. Գ. Տ. Յակովբեանց . 143
Ապերախտութիւն. (Թարգմ.) Գ. Ե. Ա. 147
Ո՞ւր ես Հայաստանեայց. (շարունակ.) Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան 159
ՊԱՏՄԱԿԱՆ. Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ (Շարունակ.)
Ռուսաստ բէկ Երզնկեանց 169
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատրաստուող սերնդի առողջապահութիւնը, (շարունակ. եւ վերջ) Մ. Տ. Ս. 175
ԱԶԳԱՅԻՆ. Ջաահիկ — ձառք երկսեռ աշակերտաց Վաղարշապատու ուսումնարանաց 191
ԱՑԻ ԵՒ ԱՑԻՔ. 192
Մահագոյժ. 194

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

1887

ՑՈՒՑԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

	Ր.	Կ.
Այրիվանք կամ Գեղարդավանք	—	20
Աստուածպաշտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամենափր տարեկան ամբողջ կալմեալ	2	—
Աւետարան համարարբառ վկայութեամբ	—	80
Բենիամին Փրանկլինի կեանքը	—	30
Գիրք հանդիսակատարութեանց կայսերական տօնից	—	50
* Գոթոդիա ողբերգութիւն	1	—
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Դաշնագիր	—	15
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան	1	—
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	1	—
Նոյն.—Միջին դարուց	1	—
Դասագիրք Քրիստոնէական հաւատոյ· Աբէլ Եպիսկոպոսի	—	20
Դասագիրք Քրիստ· վարդապետութեան Գ. Ե. Այվազեան	—	40
Դպրոց տարեկան 1874—76	2	—
* Եօթն խօսք առ տղայս	—	20
* Թուաբանութիւն զարգացելոց Ա. Գալֆայեան	1	—
* Ժամագիրք ատենի	8	—
Ժամագիրք ձեռաց	2	—
* Լոպան Աւագ ուրբաթ	—	10
* » Առումն Կ. Պոլսոյ	—	10
* » Արև	—	10
* » Զատիկ տեառն	—	10
* » Երկինք և երկնայինք	—	10
* » Հռիփսիմէ	—	10
* » Հնութիւնք Եգիպտոսի	—	10
* » Մեծն Ներսէս	—	10
* » Ս. Խաչ	—	10
* » Տօն Ծննդեան	—	10
* Խանգարմունք Հայկաբանութեան	—	50
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	50
Կանոն աշակերտաց Գէորգեան ճեմարանի	—	10
Կանոն ընկերութեան Հայոց ճաւայի	—	10
Կանոն ծխական Դպրոցաց	—	20
Հանդէս Դ. տարեգարձի Գէորգեան ճեմարանի	—	10



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Դ. — ՇՐՋԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ԱՊՐԻԼ 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ.

« Այսօր է, զոր արար Տէր.
եկայք, յնծայացուք եւ ուրախ եղիցուք ի սմա »։

Այսօր Հայաստանեայցս Առաքելական Սուրբ եկեղեցին մեծաւ ուրախութեամբ բարձրաձայն քարոզելով աւետումէ իւր հաւատացեալ քրիստոնեայ ժողովրդոց, ասելով, Քրիստոս յարեաւ է ի մեռելոց։ Թէև երեք խօսք ենք լսում բայց ինչպէս զօրաւոր, ինչպէս մեծ ազդեցութիւն են անում ամեն մի քրիստոնէի վերայ և ինչ փրկարար, ինչ երջանկաբեր նշանակութիւն ունին բոլոր մարդկային ազգի համար։

Առաջին անգամ լսելով այդ խօսքերը, « Քրիստոս յարեաւ է ի մեռելոց », ինչ զգացինք մենք մեր հոգւոյ մէջ։ Այդ՝ մեր հոգու մէջ բարերար կերպով թափանցող խօսքերով՝ սուրբ եկեղեցին, աւետելով մեզ Քրիստոսի սուրբ յարութիւնը՝ նոյն խօս-

քերը կրակի նման անց կացան մեր բոլոր գոյութեան մէջ, մտքներս լուսաւորուեցան, զգացմունքներս կենդանացած, հոգևոր ուրախութիւն արտափայլեց մեր դէմքերի վերայ, ուրախութիւն արտայայտուեցաւ մեր խօսքերի մէջ, աստուածապաշտութեան եռանդ և շնորհակալութեան ջերմ զգացմունք վառուեց մեր արած աղօթքի մէջ: Ո՛վ քրիստոնեայք, արդեօք ճշմարիտ չէ՞ ասածս:

Կարելի է, որ նոքա միայն չեն զգում այսօր իւրեանց մէջ այս ցանկալի աւետիքն, որոնք որ չհաւատացին Քրիստոսի սուրբ խաչելութեանը, Քրիստոսի, Որ սորանից երկու օր առաջ մարդկային ազգը հոգևոր գերութիւնից՝ մեղքից ազատելու համար՝ մատնուեցաւ անօրէն և արծաթասիրութիւնով մոլուած Յուդայից աստուածասպան չարագործների ձեռքը, Որ սաստիկ չարաչարանքներ կրելով, վերջապէս՝ Գողգոթա լեռան վերայ խաչուելով, իւր սուրբ և անմեղ արիւնը թափեց մեզ համար. բայց այդպիսի չհաւատացող մարդիկ, կարծում եմ թէ՝ քրիստոնէիցս մէջ շատ քիչ կգտնուին: Այո՛, կարելի է, մասամբ դեռ և նոքա, որոնք որ քառասնորդական պահոց միջոցին՝ ժուժկալութիւն չունեցան, չզղջացին, չապաշխարեցին, չխոստովանուեցին իւրեանց մեղքերն, և չմիացան Քրիստոսի հետ սուրբ հաղորդութիւնով. բայց, այնպիսիները, կարծում եմ, շատ քիչ են: Բայց և այնպէս մեր Փրկչի Յարութեան աւետեաց խօսքերով ցանկանում ենք ձեզ ի բոլոր սրտէ մեզ հետ միասին մասնակցել Տիրոջ սուրբ Յարութեան մեծախորհուրդ ուրախութեանը, Քրիստոսի սուրբ Զատկին:

Այժմ ժամանակը չէ օտարացնել մեկին իրանից, որովհետև Քրիստոս յարեաւ է ի ննեղեալս: Ժամանակը չէ յանդիմանել մեկին՝ իւր խղճմտանքի առաջ ունեցած պարտականութեան դէմ արած առաջուայ անհաւատարմութեան համար, որովհետև Քրիստոս յարեաւ է ի ննեղեալս: Ժամանակը չէ նշաւակել մեկին իւր արած մեղքերի համար, որովհետև Քրիստոս յարեաւ է ի ննեղեալս: Մտէք ամենքդ, ասենք Անկեբերան սուրբ հայրապետի խօսքերով, ձեր Տիրոջ ուրախութեան մէջ. ժուժկալներ և անհոգ ծոյլեր, սուրբ օրս պատուեցէք. պաս պահողներ և չպահողներ, այսօր ուրախացէք: Սեղանը լի է ամեն տեսակ ուտելիքներով, վայելեցէք ամենքդ, դառը գերացած է, ոչ ոք սուտած դուրս չգայ,

ամենքդ էլ հաւատոյ խնջոյքը վայելեցէք, բոլորդ էլ ընդունեցէք բարութեան հարստութիւնն »։ — Ահա խօսքեր, որ բոլորովին արժանի են Ոսկեբերան Սուրբ Հայրապետին, որ բոլորովին համապատասխան են Քրիստոսի սիրոյ Հոգւոյն։ Լսենք այս միխթարական սիրոյ խօսքին, և ուրախ սրտով գրկենք սիրով մեր բոլոր մերձաւորներին՝ գրկենք միմեանց, — և բոլոր մեզ առողներին ներենք Քրիստոսի սուրբ յարութիւնի՛ն։

Ուրախանանք ուրեմն բոլոր քրիստոնեաներս Քրիստոսի սուրբ յարութեան ուրախութիւնովը, ուրեմն Քրիստոսի սուրբ Զատիկը։ Հանդիսաւոր կերպով կատարենք ուրեմն մեր Փրկչի հետ սուրբ յարութեան և նորոգութեան օրն, ասելով « Այսօր և մեք զուարճացեալք՝ պայծառացուք ծնիւս ընդ հաշտութեան Աստուծոյ, միմեանց արկցուք գիրկս սիրով և միաբան գոչեսցուք Քրիստոս յաքեաո — ի ձեռելոց »։

Կարապետ Գ. Տէր Յակովբեանց.

ԱՊԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ.

(1. Թէսաղ. Գլ. Ե. 18)։

Ի՞նչ կլինեի ես առանց իմ ստեղծողիս ողորմութեանն, որ ամեն կողմից ծաւալում է ինձ վերայ իւր պայծառ լոյսն, որ ինձ գրկում ու գգվում է, մինչև որ մի օր իմ աչքս փակուի մահուանս ժամանակ։ Բայց էլի քիչ է պատահում, որ ես մտածեմ ինձ խնամող Տիրոջս վերայ, թէ ինչքան մեծ մեծ բաներ է արել է ինձ։

Ինչի՞ է պէտք բերանովս միայն Աստուած օրհնել ու գովելս, քանի որ սրտովս նորանից հեռու եմ. քանի որ ասերախտութիւնս դեռ և ես վէրքեր ունի դրած եմ քրիստոնեայ եղբօրս շատ ազնիւ սրտումն։ Աստուածպաշտութիւնն այն ժամանակ է միայն ճշմարիտ, երբոր սէրն է մեզ իւր սուրբ սեղանի առաջը տանում։

Եւ ինչ լաւութիւն, որ տեսած եմ ես մարգկանցից, միշտ անմոռանալի լինի ինձ համար. ու բարեկամիս ինձ արած մինչև

անգամ ամենափոքր շնորհն, ինձ տուած ամենափոքրիկ պարգևն էլ իմ սիրոս շարժի շնորհակալութեանս զգացմունքով։ Առաջ քո երկրաւոր յանցանքներդ քաւիր, յետոյ Աստուծոյ հաճութեան ու շնորհացն արժանի լինելուդ վերայ ուրախացիր։

Կուզեմ իմանալ մարդոց վատանալու երեք գլխաւոր աստիճանները։—Մտիկ տուր ուշադրութիւնով անյնապէրին, որ բաւական խելք ունի իրան ամօթ բերող մոլորութիւններիցը հեռու փախչելու, որովհետև իրան պատուից քցել, կամ վնաս բերել կարող էրն. բայց սաստիկ յոյլ և ծոյլ էլ է այն աւրինաները պատելու, գտնելու, թէ ինչպէս կարող էր նա իւր բարեկամներին ու թշնամիներին բարիք անել։ Ինքն իրան համարում է նա արդէն գերազանց քրիստոնեայ, որովհետև ոչ մի կոպիտ յանցանք չի թողնիլ, որ իրան արատաւորի։ Նա մինչև անգամ չի հրաժարվում իւր կոլմից օգնելու, որ մի բարի, մի օգտակար գործ գլուխ գայ. միայն թէ առանց մեծ աշխատութեան, առանց շատ նեղութիւն քաշելու կատարուէր այդ գործը։ Նա, իւր բնական կարեկցութիւնից շարժուած, օգնում է ողորմութեան տուրքով կարօտներին, չունեաւորներին, և յոյս ունի, որ երկինքը մեծ բարիքի տեղ ընդունի, ինչ որ ինքն ուրիշներին տալիս է իւր ունեցածի աւելորդներից, ու ինչ որ ուրիշ տեղ, մի ուրախութիւն ստած ժամանակ, կարող էր դէն քցելու պէս պարգև տալ, առանց ափսոսանալու, որ գրպանիցը զուր տեղն իւր վողը հանեց, տուեց այդպիսի մի տեղ։ Նա ամենայն ուշադրութեամբ ու խնամով պարտական չի թողնում իւր անձը բարեկամների իրան արած քաղաքավարութիւնների առաջ, հետու է մնում ուրիշների հետ վիճելուց, կռիւ անելուց, ոչ ոքի սրտին չէ կպչում, ամենի հետ բարեկամ է մնում։ Կարելի է, որ բայի սպրանից՝ եկեղեցի էլ է գնում, շատ կրօնասէր էլ է իրան ցոյց տալի, նշանակուած ժամանակներում մոլորական աղօթքից էլ յետ չի մնում, ու կարծում է այն ժամանակ, որ ճշմարիտ քրիստոնեայ է։

Ա յոպիսի մարդը դեռ այնքան վատացած չէ, ու փչացածների շատ մի ստորին աստիճանի վերայ չէ։ Նա մոլի չէ, մեծ պակա-

սովթիւններ չունի, բայց մի մեծ առաքինութիւն էլ չունի։ Դա յոյսը գնում է փրկչի իւր չարչարանքովն ու մահուամբը մարդկային ազգի համար ունեցած արդեանց վերայ և ապրում է, որ կեանքը վայելի։ Ինչ որ, պատահաբար, դեռ չոկ՝ այս ու այն բարի բանն էլ է անում, համարում է խելօքութիւնով ձեռք բերած մի մայր գումար, որ միւս կեանքումը մեծ տոկոսներ կբերի իրան։

Վատացած մարդոց երկրորդ առաջինն այն է, որ նոքա իրանց զօրացած կրքերին հետևելով, այս ու այն անպատկան բանն անելու են տարվում։ Այդպիսի մարդիկը մոռանում են, որ իրանց արածը սովորական վարք ու կարգից դուրս է, անվայել գործ է, առաքինութեան ու կրօնի ընդդէմ է, այս ամեն բանը մոռանում են, որ իրանց գլխաւոր հակմանը ծառայեն։

Այս կարգի մարդոց մէջ է մեր առաջը, կարծես, կանգնած արբեցողն ու խաբեբան, վող վչացնողն ու վոչ պաշտողն, այս տեղ է անմեղ աղջկան գլխից հանողն ու ամուսնութեան դէմ մեղանչողն, այստեղ է պատուամոլն ու թղթախաղն, այստեղ է ամեն մի մարդ, որ գերի է որ և իցէ մոլի մի հակմանն։ Այսպիսի մարդիկ՝ ուրիշ ամեն բանի մէջ, որ իրանց թուլութեանը չէ վերաբերում, կարող են, իրանց մեղսային հակումին չափուրց գանելուց յետոյ, լինել հասարակաց օգտակար քաղաքացիք, քնքուշ ղգայմունք ունեցող ծնողք, մեծահոգի բարեկամներ, կարող են զոհել իրանց և ինչ որ իրանցն է ճշմարտութեան, արդարութեան և առաքինութեան համար։ Բայց իրանց կրքի իշխանութեան տակն են ու նորանից՝ իբրև մի չար ոգուց առաջնորդուելով, մի մոլութիւնից դէպի միւսն են ընկնում, մի չարագործութիւնից դէպի միւսը, մինչև որ վերջապէս, գնալով գնալով միշտ և դէպի աւելի խորն ընկնելով, մեղքի բոլոր շրջանն անց են կենում։ Բայց այս տեսակ թշուառացած մարդոց ամենավատն էլ դեռ էլի ունի իւր սրտի մէջ պահուած բարու մի քանի կայծեր։ Դորանց մէջ ամենից աւելի փչացածն էլ դեռ ևս կորած չէ։

Իսկ բոլորովին վատացած, բոլորովին փչացած մարդոց երրորդ և ամենաստոր աստիճանի վերայ է միայն մէկն, և ոչ որ նորան ճանաչում է, սիրտը աստիկ վրդովուած, երեսը նո-

բանից շուռ է տալիս։ Այդպիսի զղուելի մարդն, այդպիսի հրեշն ոչ միայն իւր հաճոյքի համար է ապրում. ոչ միայն իւր թշնամիներին է ատում. ոչ միայն չարին չար է հատուցանում — նա այդքանով չէ բաւականանում, նա բարուոյն էլ չար է հատուցանում, նա քնքուշ սիրոյ՝ ատելութիւն է փոխարինում. բարերարութեան՝ չարիք է փոխանակում, չարարար է իւր բարերարին։ Այս այն մարդակերպ գազանն է, որին ապէ-ջո՛ջ անունն ենք տալիս։

Ապերախտ մարդն, որոյ մտքի աչքը կուրացած է ու խիղճը մեռած, այնչափ փչացած է ու մարդկութիւնից դուրս եկած, որ իւր դէպի Աստուած և դէպի իւր նման մարդիկն ունեցած ամենաստուրբ պարտականութիւնների վերայ ծիծաղում է անպատկառ կերպով, և հանգիստ սրտով կարող է մտիկ տալ մինչև անգամ անբան կենդանիների վերայ, որ իրան սաստիկ ամաչեցնում են, իրանց ունեցած հաւատարմութիւնովը դէպի իրանց բարերարները։ Նա կարող է մատնել իւր քաղաքն, որոգայթ լարել իւր գիւղին, անդարմանելի չարիք հասցնել իւր հայրենիքին, որ նրան պահեց ու մեծացրեց։ Նա՝ ցուդային նման գնում է ու իւր նենգաւոր շրթանց համբոյրներով իւր ամենահաւատարիմ բարեկամին ծախում։ Նա՝ իւր չարիք մոռացող վարմունքովն՝ իւր բարերարների համար փոս է փորում, որ նրանց ունեցած չունեցածի տէրը դառնայ, նոյա այն բարիքի, որով իւր նեղութեան մէջ օգնեցին իրան, անել դրութիւնից հանեցին՝ ու մարդոց կարգն անցկացրին։ Նա իւր ուսուցչին խայտառակում է, այն ուսուցչին, որ իրան ցոյց տուեց փրկութեան ու բարօրութեան ճանապարհը, նա է, որ իւր չորանալու ձեռքը բարձրացնում է իւր հօր գլխին, որ, շատ հոգս անելով ու միշտ ախրելով իւր վերայ, մաղերը ճերմակացրեց, որ ճղում է կուրծքն այն մօր, որ մի ժամանակ իրան կաթ տուեց ու մեծացրեց։

Ամենայն ազգերն, աշխարհիս կրօններն ապերախտի համար իրանց ջոկ անէծքներն ունին, որ թափում են նորա գլխին։ Ամենայն մարդիկ ամեն մի տեսակ չարագործների համար կարեկցութեան արտասուք ունին — բայց ապերախտի համա՛ր՝ միայն ղղուանք։

Ով որ ընդունակ է իւր ստացած բարիքի տեղը չար հատու-

ցանել, ամեն ուրիշ չարագործութիւնների էլ ընդունակ է. որովհետև նորա մէջ հանգած է ամենայն առաքինութիւնների բուն աղբիւրը՝ մաքուր սէրը դէպի Աստուած։

Ինչպէս որ իւր թշնամիքը սիրելն, այսպէս ասենք, քրիստոնէական մեծ հոգւոյ կատարելութեան ծայրն է, որ մեզ մօտեցնում է Աստուծոյ, նոյնպէս և բարեկամը մատնելը՝ բարեկամին խաբելը, նորա՜ արած բարիքը բանի տեղ չդնելը, մոռանալը, նորան որոգայթ լարելը նորան չարիք անելը չար մտածողութեամբ ու չարամիտ վարմունքով, ապերախտութիւնը դէպի մեր բարերարի տունն, ամեն մոլութիւնների ծայրագոյն աստիճանն է,—մեր վրկչին էլ միայն ապերախտութիւնը կարող էր մարդասպանների ձեռքը տալ, միայն ապերախտութիւնը կարող էր խաչուելու տանել։

Մարդկային բնութեան դէպի վատը փոխուելն ու վչանալն ունի իւր վտքը ու մեծ աստիճանները։ Արդէն արած բարիքը մոռանալը, վայելած սերտ բարեկամութիւնը բանի տեղ չդնելը, իւր հաւատարիմ առաջնորդների դէմ անտարբեր լինելն, որպէս և դէպի իրանց սրտանց սիրող ծնողքը, մի սև բիծ է, որ մարդուս սիրտը արատաւորում է։

Ա՞խ, ինչպէս այս ու այն մարդն, որ պարծենում է իւր քրիստոնէութեան վերայ, կեղտոտել է իրան այս յանցանքով, ինչպէս այս ու այն մարդն, որ աշխարհիս մէջը աղնիւ ու արդար կարող էր համարուել, իւր այսպիսի անզգայութիւնովն ապացուցանում է, որ ինքն Քրիստոսի հետևողների կարգից դո՜ւրս է։

Սիրեցէք ձեր թշնամիների՜ն, ասում է Քրիստոս։ Բայց դու մոռանում ես մինչև անգամ քեզ սրտանց բարեկամիդ. էլ չե՞ս մտածում, էլ միտք չե՞ս բերում այն բարերարութիւնները, որ քեզ արեց ու կարծո՞ւմ էլ ես, որ դու քրիստոնեայ ես։

Օրհնեցէ՛ք ձեզ անիծողների՜ն, ասում է Քրիստոս։ Բայց դու զանցառու ես գտնվում դէպի այն մարդիկը, որ քեզ իրանց օրհնութիւնը ուղին, ու քեզ համար աղօթք էին անում, որ դու Աստուծոյ և մարդոյ առաջ միշտ պարզերես լինիս։ Դու բանի տեղ չես դնում այն բարեպաշտ ուսումն ու խրատները, որ քեզ տուին, ու չես մտածում, որ նոքա միայն քեզ համար էին ապրում։

Բարիք արէք նոցա, որոնք որ ձեզ ատե՜մ են, ասում է Քրիստոս: Բայց դու գլխիդ հեռացնում ես ու երեսի վերայ թողնում նոցա որոնք որ քեզ մեղքացել են, խնամք են տարել քեզ, երբ որ դու կարօտ էիր. որոնք որ քեզ հաց են ուտեցրել, երբ որ դու քաղցած էիր. որոնք որ քեզ օգնել են խարհրդով ու գործով, երբ որ դու նեղ դրութեանդ մէջ շուարել, ինքդ քեզ կորցրել էիր, ու ախ էիր քաշում մէկ տեղից օգնութիւն գտնելու: Երբ որ դու քեզ տուած փողը յետ դարձրիր, կարծեցիր թէ՝ պարտքիդ պրծար. մի՛թէ բարոյական պարտքիդ էլ դուրս եկար, ուզում եմ ասել, այն լաւութիւնից, որ քեզ քո բարերարներդ արին, քեզ հասան, ու նեղութեանդ օրերում քեզ օգնեցին: Մի՛թէ դու քրիստոնեայ ես, մի՛թէ դու կարդում ես հանգիստ սրտով ազօթք անել ու համարձակ Աստուծոյ տունը մտնել:

Բայց ես խօսք չեմ գտնում ասելու թէ՝ որչափ պախարակելի, որչափ անարժան գործ է, երբ որ մարդ ոչ միայն զանց է անում բարեգոյն բարի հատուցանելին, այլ և բարեոյ տեղը չարիք է անում: Ահա այս է մարդուս սրտի վերջին աստիճանը փչացած լինելին, այս է մարդուս սրտի ամենաճանը վէրքն, որ ամենին զզուանքով հեռու է փախցնում: Ամեն մշութիւնների մէջ հեշտ է քայլ առ քայլ յառաջ գնալը դէպի աւելի վատն: Երբոր մի մարդ մոռացել է մի անգամ այն ձեռն, որ մի ժամանակ իրան օգնեց, խնամեց, օրհնեց, կարող էլ է մի ուրիշ ժամանակ մինչև անգամ անիծել նոյն ձեռքը: Ով որ էլ միտքը չէ բերում այն սիրոն, որ իրան սիրով գգվում էր, կարող է մի ժամանակ այն սրտի մէջ ոուբը խրել: Մոլութեան ճանապարհը դէպի ցած է գնում, ու մեղքերն իրանց ծանրութիւնովը քաշում են մեզ դէպի անդունդը:

Այս ճանապարհի վերայ է մանգալիս նա, որ իւր հայրենեաց դէմ անհաւատարմութեան՝ կամ մատնութեան ծանր ու անները՛լի յանցանքն է գործում. այս ճանապարհի վերայ է մանգալի դրպարտիչն դէպի այն արժանաւոր անձն, որ իրան պատուի հասնելու օգնեց. այս ճանապարհի վերայ է մանգալիս խաբողը նորան, որ բարութեամբն իրան հարստացրեց. այս ճանապարհի վերայ է մանգալիս նորան անպատիւ անողն, որ իրան հաւատ ընծայեց. այս ճանապարհի վերայ է մանգալիս

այն վատացած, խորթացած դաւակն, որ իւր մօրից ամաչում է, այս ճանապարհի վերայ է մնում դալիս Հայրասպատ նոյն։

Դուք սարսափում էք, ոմ քրիստոնեայ եղբայր և քոյր, այդ՝ մէկ մէկ ձեր առաջը բերած՝ տեսակ տեսակ հոգի սևացնող գործերը կարդալով, — այն չարագործութիւններն, որոնց համար հին ժամանակի բաւական աղգեր օրէնք չունէին ամենևին, և ոչ ուղում էին ունենալ, որ մահկանացու մարդոց միտքը չգցեն թէ այդպիսի յանցանքներ՝ կամ եղել են, կամ կարելի է անել։ Դու սարսափելով ետ ետ ես գնում ու հեռու քաշվում այդ անխղճմտանք մարդկանցից, ու մի ուրախ զգացմունք է կենդանացնում քո սրտումդ, երբոր մտածում ես, որ դու այդպիսի մեղութիւնից դեռ բոլորովին ազատ ես եղել։

Բայց քննիր ինքդ քեզ, թէ արդեօք յիրաւի մաքուր ես մնացած ամեն տեսակ ապերախտութիւնից։ — Կարելի է, որ քեզ նման մարդոց ոչ մէկին՝ սիրոյ տեղը՝ մտքից անց չկացնելու ու զարմանալու կերպով աստելութիւն չես փոխարինել։ կարելի է, որ երբէք չես մոռացել այն բարիքն, որ դու նորանից ստացել ես։ Բայց եթէ դու քո եղբօրդ դէմ մի սխալանք չես արել, որովհետև վախեցել ես, որ քեզ չհանգստացող ու անպիտան մարդու տեղ դնելով, կարհամարհի, արդեօք սրտովդ նոյնչափ էլ երախտագէտ եղել ես բարձրեալ և աներևոյթ Բարերարիդ, առանց որոյ շնորհացն ամեն մահկանացուներից աւելի անտեսուածն ու ամենից աւելի թշուառը կլինէիր։ երբէք չես մոռացել արդեօք քո Աստուծոյդ շնորհքն ու ողորմութիւնն, որ նորոգվում է քո մէջդ՝ ամեն մի անգամ շունչ քաշելումդ։ — Իրաւ է, կարելի է, որ մի քնքուշ զգացմունքով ու երախտագէտ սրտով միտքդ ես բերում այն, ինչ որ դու պարտական ես դերեզմանի գրկումը հանգստացող ծնողացդ։ Բայց ամեն ժամանակ անմոռաց պահել ես մտքումդ այն օրհնութիւնն, որ Բրիստոս Փրկիչդ քեզ բերեց, երբոր խաչի վերայ արիւն էր թափում։ Արդեօք ամենասուրբ Միջնորդդ, որ քեզ իւր կեանքովն, իւր խօսքովը դէպի Աստուած տարաւ, քո բոլոր բարերարներիդ մէջ ամենից աւագինը չէր։ Դու մոտենում ես սուրբ հաղորդութեան խորհրդին, որ նորա մահուան յիշատակը կատարես. բայց նորա վերջին կամքը կատա-

բռնւմ ես։ Ապրիլմ ես արդեօք բոլորովին նորանում, նորա երջանկացող ուսման մէջ։ Քո աստուածպաշտութիւնդ, կարելի է մինչեւ պատշաճողութեան ու սովորութեաճն մի գործ էր։ — «Սիրենք» ասում է, սուրբ Աւետարանիչն Յովհաննէս «ոչ թէ շրթունքով ու լեզուով, այլ գործով ու ճշմարտութեամբ։

Ապերախտութիւնն՝ իրրեւ ազբիւրից՝ յառաջ է գալի մշտ մարդուս սրտի խստութիւնից ու անկրթութիւնից, մանաւ զգացմունքների պակասութիւնից, որ աւելի ազնիւ մարդուն՝ քրիստոնէին պիտի զարդարի։ Խոնարհութեան պակասութիւնից, խոնարհութեան, որ յօժարութեամբ խոստովանում է, որ ինքն իրան ու միայն իւր միջոցներով՝ քիչ բան է ձեռք բերել, մարդոց բարեկամութիւնով՝ շատ, իսկ Աստուծոյ ողորմութիւնովն՝ ամենայն բան ստացել է։ Ապերախտութիւնը բղխում է մեղսական կրքից, որ մեր սրտին ախրել է, և կարծես, նորա բացարձակ և միակ տէրն ու իշխանն է դարձել։

Շատ շատ անգամ մարդուս ճանապարհից հանում է թեթեւամտութիւնն, որ մոռանալ է տալի մեզ մեր վայելած բարիքն։ Ուրեմն այդ մեր պակասութիւնն պէտք է սաստիկ կերպով հարուածենք, որովհետեւ ամենահասարակ ու ամենասովորական սխալանքներից մէկն է, որով մենք հեռանում ենք Աստուծոյ հետ միանալուց։ Որչափ որ մեր միտքը աւելի դիւրաւ հակում է վայելած սիրոյ յիշատակը մոռանալու, այնչափ էլ աւելի խոր պիտի տպաւորենք նորա մէջ այդ բարերար զգացմունքը։ Մենք մեզ համար ամենասուրբ պարտականութիւն պիտի համարենք, ոչ մի մեզ հաճելի մի գործ, ոչ մի բարեկամական ծառայութիւն, ոչ մի օգնութիւն մեր նեղութեան մէջ չընդունել, եթէ որ ամեն մի դիպուածում կրկնապատիկն ու եռապատիկը հատուցանելու չենք։

Ոչ մի բան մարդոյ իրար հետ այնպէս սերտ կապով չէ կապում, ինչպէս տեսնելը յօժարամիտ կամք ու պատրաստական սիրտ, որ բարեկամութեան մեծ արժէք է տալի։ Աննշմարելի կերպով ամեն մի մարդ յարում է այդպիսի սիրտ ունեցողին, մինչդեռ անհասատատ ու թեթեւամիտ բնութեան տէրը շուտ արհամարհվում է, անտեսվում, ու շահն այն է, որ ոչ ոք իւր վերայ լաւ կարծիք ու վստահութիւն չունի։

Նոյնպէս սովորաբար, ապերախտութեան պատճառ է ինքա-

*Տիս-Ինքն, ինքն իրան աստուածացնող անապատ-Ինքն ու նո-
րանից յառաջացող անհիմ ու անթեղի ամօթն։ Ամբարտաւանու-
թիւնն ոչ ոքի ոչ մի բանում պարտական լինել չէ ուզում, այլ
ամենայն բան միայն իրան։ Ունայն փառք սիրող անապարձն ու-
րիշների իրան արած լաւութիւնն ընդունում է ոչ թէ իբրև
բարերարութիւն, այլ իբրև մի զոհողութիւն, որ իրան պար-
տական են անել, դուր և անտեղի ամօթն անպատուութիւն է
համարում իւր յանցանքը խոստովանել։ անհիմն կերպով ան-
կախ լինել սիրողը ծանր է համարում երախտագիտութիւն ցոյց
տալը։ Նա ուզում է միայն իրաւունքներ ունենալ և ուրիշ ա-
մենայն մարդկանցից պարտականատարութիւն պահանջել։*

*Բայց քրիստոնեան իւր սրտից հալածել է՝ մեծամտութիւնից
ու ինքնահաւանութիւնից յառաջ եկած այս անպատշաճ ու
յանդուգն համոզմունքն ու կարծիքը։ Նա ուզում է միայն
մարդ լինել Աստուծոյ կամքին համեմատ։ Նա գիտէ, որ հէնց
ամեն բանն էլ, ինչի վերայ որ մահկանացու մարդս սովորու-
թիւն ունի պարծենալ՝ կամ հպարտանալ, երկար տեւողութիւն
չունի։ գեղեցկութիւնն անց է կենում քիչ տարիներից յետոյ,
հարստութիւնը՝ հող ու փոշի է, որ մարդուս հոգւոյ հետը չէ
կարող գնալ յաւիտենական կեանքը։ խելքի գերազանց ընդու-
նակութիւններն ու յարմարութիւնները հազիւ կարող են մի
քանի տարիներ անուն հռչակել։ Միայն առաքինութիւնն է
պղնծացնում մեզ Աստուծոյ ու մահկանացու մարդոց առաջ,
սանձահարում, նուաճում աշխարհի արած դատողութիւնն
ու բարձր մնում մեզ վերայ ասած ու խօսածներից, մեզ մեր
վիճակի, մեր գլխին եկածների մէջ չէ թողնում, որ մենք
խեղճանանք, պատիկանանք, ցածանանք։ միացնում է մեզ Աս-
տուծոյ հետ, մեր հոգին տանում է յաւիտենական կեանքը։*

*Ով որ քիչով բաւականացող մարդու է պատահում, ու
տեսնում է նորան, որ շնորհակալութեան ջերմ զգացումով
սիրտը լցուած է իւր Ստեղծողից ու իւր վիճակից, կարող է
արդեօք անտարբեր մնալ, որ իւր սիրտն չշարժի։ Ով արդեօք
չի պատուիլ այս համեստութիւնն ու չի խոնարհիլ սիրով այդ
իսկական խոնարհամտութեան առաջ։ Եթէ որ ամեն մարդոց
սիրտն էլ աշխարհիս Փրկչի այս առաքինութիւններովը լցուած
լինէր, այն ժամանակ Աստուծոյ արքայութիւնը վաստատ*

կերպով առաջ կերթար ու կմեծանար այս աշխարհիս վերայ։ Բայց դժբախտաբար, զարհուրում ենք, երբ որ շատ անգամ դորա հակառակն ենք միայն տեսնում։ Մենք օրքան շատ մարդոց մէջ ոչ մի առաքինութիւն չենք տեսնում, այլ միայն, չափից դուրս մի պախարակելի վարպետութիւն, որ խելօքութիւն է աւելում, տեսնում ենք՝ ոչ թէ սրտանց, քնքուշ սէր, այլ գարշելի ապերախտութիւն։ Սորանիցն են յառաջ գալիս աշխարհումն շատ տեսակ դժբաղդութիւններ, որ հազարաւոր անգամ տեսակ տեսակ գարշելի կերպերով մեզ պաշարում են։

Այն չարիքն, որ մի մարդու սրտէ ապերախտութեան գործից է յառաջ գալիս, շատ անգամ կարող է ըստ ինքեան մի փոքր բան լինել, բայց քիչ անգամ չէ պատահում, որ մեծ հետևանքներ է ունենում։ Ապերախտութիւն ցոյց տուող գործն պարզ, ուղիղ, և անխարդախ մարդոց սրտի մէջ սպասում է այն հաւատարմութեան զգացմունքն ու գաղափարն, որ ունէին դէպի իրանց նման մարդիկը. իսբուած մարդուն թելադրում է, որ ոչ ոքի չհաւատայ ու մի անյաղթելի կասկած ու վատ կարծիք ունենայ բոլոր մարդկային սեռի վերայ։ Վախենալով ետ քաշուել է տալիս ուրիշներից, չհաւատալով, որ անշահասէր ու անկեղծ բարեկամութեան զգացմունքներ ունենան, ինչու որ տեսնում է թէ՝ ինչպէս մեր սիրտը կոտրող խաբեբայութիւն է դուրս գալի այդպիսիների ցոյց տուած մեծ բարեկամութիւնից, ու պատճառ է դառնում, որ մեր սրտի մէջ մեռնում են քանի քանի բարի մտքեր, որ պէտք էր մեզ պահէին բարի գործեր անելուս, և անպտուղ են մնում՝ մեր արգանդում դեռ չծնած՝ մեռած զաւակի նման։

Դու, որ բարեկամական կապը անհաւատարիմ ապերախտութիւնովդ կտրել ես, դու, որ քո բարերարիդ սիրտն աննեղելի կերպով սրած մեծ անհաւատարմութիւնովդ, շատ ստոր խաբեբայութիւնովդ ու զզուելի նենգութիւնովդ վիրաւորել ես, —դու տղայ, դու աղջիկ, որոց չարութեան վերայ՝ հասակ առած հայրդ ու մայրդ դառն արտասուք են թափում, լաւ լմայէք, որ ձեզ համար անէծք սերմանեցիք։ Դուք՝ ոչ թէ մէկ՝ այլ շատ բարի սրտերից կտրեցիք հաւատը դէպի մարդկութիւնը, հաւատը դէպի առաքինութիւն, դուք անթիւ բարի գործերի սերմը ոտնակոխ արիք, դուք երկրիս վերայ դժոխք

չինեցիք։ Ինչու որ այն վերքն է աւելի ցաւում ու աւելի այրվում, որ մենք ստացել ենք մեր սիրելիների ձեռքից։

Ո՛վ թշուառ, որ այս տողերը կարդալու ժամանակ, աչքիդ առաջն է գալի քո արած քանի ու քանի յանցանքներդ ու խղճմտանքդ սաստիկ տանջում է, ապերախտութիւնդ ինչ օգուտ բերեց քեզ։ — Դու Աստուծոյ և աշխարհի առաջ կանգնած ես դատապարտուած։

Մի կարծիլ, որ այդպիսի սիրտ զայրացնող մի անարգ գործդ, որ քո չար սրտումդ թագցրած չար մտքիդ երաշխաւորն է, մի կարծիլ, ասում եմ, որ առանց հատուցման կմնայ։ Դու գանգատուելու իրաւունքդ կորցրել ես, երբ որ մի օր ուրիշը քեզ խաբի, ուրանայ, վատութիւն անի, կամ մատնի. երբոր մի օր մի ուրիշից քո բարերարութեանդ փոխարէն՝ խարդախութիւն ու չարիք տեսնես։ — Դու կորցրել ես ամենաքաղցր վայելումն, այն անուշիկ ուրախութիւնն, որ քեզ կարող էին պարգեւել քո բարի գործերդ։ Ինչու որ ամեն մի շնորհակալութիւն, որ կանի քեզ մի երախտագէտ սիրտ, քեզ վերայ մի՛շտ այն հակառակ ազդեցութիւնը կունենայ, որ միտքդ կձգի քո անարժան գործերդ։

Երբոր Յակովբայ որդիքն իրանց ծերացած հօրը բերին իւր սիրելի Յովսէփի արիւնաթաթախ հագուստն ու ասացին թէ՝ «վայրենի գազան է նորան պատառել,» հէնց այն ժամանակ անշուշտ նորա միտքը չէր ընկնիլ և իրրև վրէժխնդրութեան ոգի առաջը չէր գալ ու կանգնիլ երիտասարդութեան հատակումն արած իւր չար գործն՝ ստախօսութիւնն, որ իւր հօր առաջ արել էր ու խաբել նորան։ Նա չէր ուզում մխիթարուել ու գոչեց՝ «ես սրտի ցաւով պիտի գերեզման իջնե՛մ։» Այսպէս էլ կարող է մի օր քեզ պատահել, երբոր դու քո ծնողացդ կամ քո բարերարիդ հաւատարմութեանը փոխարինել ես գարշելի անհնազանդութիւն։ Քո թշնամիներդ նոյնպիսի ապերախտութիւն կը բերեն քո գլխիդ՝ ծերութեանդ օրերումն, ինչու որ մարդս ինչ որ ցանել է, այն պէտք է հնձէ, — և ինչ չափով, որ դուք կչափէք, ձեզ էլ նոյն չափով կչափուի։

Երբոր Յուդան գնաց ու իւր ազնիւ Ուսուցչին՝ մեղքի վարձատրութեան համար՝ նորա արիւնարբու թշնամիներին ծախեց, ապերախտութեան վրէժխնդրութիւնը շուտով նորան

տարաւ իւեղագարուձեան, իսկ իւելքը կորցնելը՝ սարսափելի ինքնասպանուձեան։ — Նոյնը կարող է քեզ պատահել, եթէ որ դու էլ քո կեանքում մի բարեկամիդ՝ մանաւանդ ծնողդ ու բարերարիդ անհատատարիմ ես գտնուել և իբրև դաւաճան խաբել ես նորան անարժան գործովդ, չարուձիւն անելով։ Ո՛ չար գործիդ նղովքն ետևիդ կգայ քո ամեն մի քայլափոխումդ, էլ քեզ հանգիստ մի ժամ անցկացնել չի թոյլ տալ և մի օր քո մահուան անկողնիդ մէջ քեզ չարաչար կտանջի, մինչև որ հոգիդ հանի, մեռնես, պրծնես։ Այո՛, ճշմարիտ է, որ այսպէս է մարդկային կեանքի մէջ՝ ինչ որ ցանել ենք, այն էլ պիտի հնձե՛նք։

Ո՛վ Աստուած, Դու՛ պահես ինձ այս դաւտաստանի զարհուրանքից։ Մինչեւ այժմ էլ կմոռանայի դէպի իմ բարերարներս ունեցած իմ սուրբ պարտականուձիւններս, որ նոքա, իմ վերայ բարկանալով, իրանց երեսը ինձնից շուռ տային։ Կարելի է, որ ես էլ ընկած եմ արդէն մարդկային անօրէնուձեան այն իսոր անդունդքն, որից ազատուելու էլ յոյս չկայ։ Իմ Աստուածս օգնի ինձ, քանի որ դեռ ժամանակ կայ։ — Այո՛, դեռ ևս ժամանակ կայ, դեռ ևս կենդանի եմ ես. դեռ ևս շունչ եմ քաշում, դեռ ևս կարող եմ քաւել իմ արած ապերախտուձեանս մեղքը։ Ո՛վ երկնաւոր Հայր, թո՛ղ նորից յետ դառնայ Քո մեղաւոր զաւակիդ մէջ սիրոյ հոգին, և էլի բնակուի նորա սրտումն իմ Փրկիչ Յիսուս Քրիստոսի հոգին, որ ինձ տանի, հանի ուղիղ ճանապարհը։

Թարգմ. Գալղնէրէնից Գրիգոր Եպիսկոպոս Աղաթիրեանց։

ԱԹՈՌ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ·

(Շարունակութիւն, Աբաբտ Ը· գ·)

ՓԸ·

ԵՐԿԸՕՐԵԱԿԱՆ ԱԹՈՌՔ ՀԱՅՈՑ·

Հայաստանեայց աթոռոյն անկախութիւնը և ազատութիւնը, այսինքն եկեղեցական օրինօք ընդնագլուխ աթոռ մը լինելը և իւր վրայ ուրիշ գերագոյն աթոռ չճանաչելը իբր պատմական ոտուգութիւն Հաստատեցինք, թէ ծագման պարագաները և եկեղեցական կանոնները ուղղակի հետախուզելով, և թէ հակառակ կարծիքները քննադատութեան ենթարկելով իրենց վատաերովը մէկտեղ և մի առ մի ցրելով: Մեր նպատակին համաձ կրնամք ըսուիլ, և այս կէտին մեր խօսքը փակել, սակայն պատեհ առիթ կրծուի մեզ որ երբ Հայաստանեայց աթոռոյն անկախութիւնը ընդդէմ արտաքիններու կրպաշտպանեմք, փութամք ընդդէմ ներքնոց ալ պաշտպանել զայն, և իւր նուիրապետական դրութեան և կանոնաց կէտերը պարզաբանել: Զայդ ահա կրձեռնարկեմք ընել որչափ հնար է համառօտ կերպով:

Հայաստանեայց Ս· եկեղեցւոյ հայրապետական կամ պատրիարքական կամ կաթուղիկոսական գերագոյն և ընդնագլուխ աթոռն էր և այսօր է ի Ս· Էջմիածին, և կրգահակալէ ի նմին Տ· Տ· Մակար Առաջին Ատտուածարեալ Կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարք: Աթոռոյն իշխանութիւնը կրտարածուի ամենայն Հայոց վրայ, ուր ուրեք որ գտնուին, և չպարփակուիր ընչպէս ի սկզբան եկեղեցւոյ՝ միայն Մեծ Հայոց և յարակից աշխարհաց վրայ: Այդ փոփոխութիւնը Հայաստանեայց եկեղեցին չմուծեց, այլ ամենայն աղգք քրիստոնէից համաձայնութեամբ և փափուխ հաճութեամբ ընդունած են այդ կանոնը, և այժմ իւրաքանչիւր ոք չարդիլեր որ միևնոյն աթոռոյ վրայ և միևնոյն աթոռոյ անուամբ ուրիշ աղգեր ալ յատուկ եպիսկոպոսութիւններ ունենան: Ծիսից և դաւանութեանց տարբերութիւնը այնչափ շատցած է որ այժմ վեց եօթը եկեղեցականք կան որք հաւասար կերպով պանձինս պատրիարք Անաիոքայ կը կոչեն, նոյնչափ և գուցէ առաւել են Երիսյ ե-

պիսկոպոսները, և ըստ այսմ ուրիշ շատ օրինակներ կրնայինք յառաջ բերել։ Համաձայնութեամբ և փոփոխ հաճութեամբ ըսինք, բայց գուցէ լաւագոյն լինէր ըսել տարաձայնութեամբ և փոփոխ հակառակութեամբ, զի նոյն աթոռոյ վրայ քանի մի եպիսկոպոսաց միանգամայն նստելը կըցուցնէ թէ մեծ և ծանր բաժանումներ կը հերձեն և կը զատեն քրիստոնեայ աղգերը, որք չեն կարող իրարու հետ հսգևոր հաղորդակցութիւն պահել և սիրով ապրել յանուն Քրիստոսի։

Դժբաղդաբար նաև միևնոյն ազգ և եկեղեցի դարադէպ բաժանումներ ունեցած է և ունի իւր մէջ, և մեր մէջ ալ կայ կաթողիկոսական աթոռոյ բաժանում մը, և երկուց մանաւոր կաթողիկոսութեանց գոյութիւնն ի Սիս և յԱղթամար տարբեր գատաստաններու տեղի տուած է և կուտայ։ Ոչ կաթուղիկոս անունն է մեղադրելի ինքն ըստ ինքեան և ոչ եկեղեցական աստիճանաւորի մը սովորականէն աւելի իրաւասութիւն վայելելն։ Ի սկզբան յայտարարեցինք թէ եկեղեցւոյ մէջ պարզ եպիսկոպոսի և պատրիարք կաթողիկոսի մէջ տեղ ուրիշ աստիճաններ ալ կան թէ ընդհանուր եկեղեցւոյ մէջ և թէ մեր եկեղեցւոյ մէջ։

Սոյ և Աղթամարայ աթոռներուն ծագումը և սկզբնաւորութիւնը պատմութեան մէջ յայտնի է։ Հալածանաց և շփոթութեանց դարերուն մէջ օրինաւոր կաթողիկոսաց այդ քաղաքներուն մէջ նստելը առիթ տուաւ նոյն տեղերը հակառակաթոռ կաթուղիկոսներուն նստելուն. Դաւիթ Թոռնիկեան կաթողիկոս հռչակեցաւ յԱղթամար ի 1113, և Գրիգոր Մուսաբէկեան բաժանեալ կաթուղիկոս եղև ի Սիս ի 1441։ Մեր նպատակը չէ այդ աթոռոց բաժանման պատմական և իրաւաբանական խնդիրը լուսաբանել և քննադատել, զի այլ և այլ միածնի մեծ աթոռոյն և այդ մանաւոր աթոռոց մէջ խնդիր պէտք չէ լինի, քանի որ պաշտօնապէս Աղթամարայ և Սոյ կաթուղիկոսունք յանձն առին նախամեծար Գահուն և ամենայն Հայոց աթոռոյն գլխաւորութիւնը ճանաչել, և Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ միութեան մէջ եպիսկոպոսներէն և մետրապոլիտներէն ընդարձակագոյն իրաւասութիւն գործածել, և յաւանդութենէ և ի սովորութենէ ստացեալ իրաւամբ կաթողիկոսութեան վերաբերեալ պաշտօնները վարելու թոյլատուու-

թիւն վայելել։ Եթէ երբէք Աղթամարայ և Սսոյ կաթողիկոսներէն ոմանք հաստատեալ պայմանաց և կարգադրութեանց անսասանելին, իրենց գործը կըմնայ անձնական գործ. եկեղեցական և իրաւասական կանոնը անխախտ կըմնայ նաև ոմանց դանցառութեան մէջ։

Այսօր աղգին մէջ չկայ այնպիսի տիրող մի կարծիք որ Սսոյ և Աղթամարայ աթոռներուն բնաջինջ լինելը պաշտպանէ, մեք ալ զայդ պիտի չթելադրեմք ղի այն աթոռոց, պահպանութիւնը ոչ թէ կըմնասէ այլ մանաւանդ կրնայ իսկ բարձրացնել Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ նուիրապետութիւնը։

Հայաստանեայց կաթողիկոսական աթոռն լինքնագլուխ և աղատ մեծ պատրիարքութիւն է. իւր նուիրապետութիւնը կըհամնի եկեղեցական դաստակարգութեան գագաթնակէտին, և իրաց պահանջողութիւնը կը հարկադրէ որ աստիճանք բարձրագոյնէն սկսելով կարգ ըստ կարգէ իջնեն, և կարգաւ իջնեն առանց ոտոտտելու։ Առաջին աստիճանէ ալէտք է իջնենք երկրորդը, որ է եքսարքոսի կամ պրիմասի կամ փոքր պատրիարքի կամ մանաւոր կաթուղիկոսի աստիճանը։ Հայաստանեայց եկեղեցին ունէր այս աստիճանէն վրաց և Աղուանից կաթուղիկոսութիւնը։ Վրաց կաթողիկոսութիւնը Հայոց աթոռէն ընդվզելով սիրեց Կոստանդնուպօլսոյ աթոռոյն հպատակել, և Ռուսական տիրապետութեան առթիւ ալ Կոստանդնուպօլսոյ աթոռոյն հպատակութենէն ելնելով՝ Ռուսաց պատրիարքութեան վոխանակող Ռուսաց Սրբազան Սինհոդին հպատակութեան անցաւ։ Իսկ Աղուանից կաթողիկոսութեան վերջին հետքերը կընշմարուէին Արցախոյ մէջ, սակայն Աղուանից աղգութեան և Արցախոյ իշխանութեան դադարմամբ բնական կերպով դադարեցաւ և Աղուանից կաթողիկոսութիւնը, և եղև պարզապէս առաջնորդութիւն մը ի Վարաքաղ։ Այս կերպով Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետութիւնը կորսնցուց երկրորդ աստիճանէ եղող եկեղեցական իշխանաւորները, միթէ օգտակար չէ՞ որ անոնք վոխանակուին ուրիշ համապատիւ աստիճանաւորաց հետ։ Ժամանակաց բերումն որ զամանս դադարեցուց, զայս անոնց տեղ պատրաստեց։

Ուրիշ պարագայ մըն ալ յիշեցնեմք։

Քանիցս ըսինք թէ հնաւանդ օրինօք Հայաստանեայց աթո-

ոգին քան սահմանը կը տարածուէր Հայոց Մեծաց տան ու հինգ նահանգներուն և Կովկասային յարակից երկիրներուն վրայ։ Ըստ այսմ Միջագետք, Փոքր-Հայք, Փոքր Ասիա, Ասորիք, Նգիպտոս, Թրակիա և այլն արտաքոյ էին Հայոց աթոռոյն իրաւասութենէն, և կը պատկանէին ուրիշ պատրիարքական մեծ աթոռոց։ Ժամանակին որ նորութիւնները կսկեղծէ շարունակ, այնպէս կարգադրեց որ Հայերը բազմանիւթիւ և բազմախուռն դիմեցին ի գաղթականութիւն, ուր թէպէտև շատեր խառնուեցան, սպառեցան, և եկեղեցւոյ և ազգութեան համար կորսուեցան, սակայն տակաւին Հայոց նշանաւոր բազմութիւն մը կայ ուրիշ պատրիարքութեանց սահմաններուն մէջ։ Հայաստանեայց Ս. եկեղեցին և մեծ աթոռը գեղեցիկ խորհրդով մը մեզ պատմէ գերագոյն մասնաւոր աթոռներ հաստատած ունի արդէն օտար սահմաններուն մէջ։ Եթէ այդ աթոռներուն իրաւասութիւնը և արտօնութիւնը և աւագութիւնը և իշխանութիւնը ճշդուին կանոնաւորապէս, պիտի գտնեմք թէ կը պատասխանեն մեզ պատրիարքութեանց սահմաններուն, և հետևաբար պիտի ունենանք Հայոց փոքր պատրիարքներ կամ մասնաւոր կաթողիկոսներ օտար պատրիարքութեանց իւրաքանչիւրին համապատասխանող։ Աւելի բացայայտ կերպով միտքնիս յայտարարելու համար կըսեմք թէ մեք այժմեան դրութիւնը իմաստասիրելով կը գտնեմք, թէ Հայոց աթոռն երկրորդ աստիճանի իշխանաւորներ հաստատած ունի իւր հաւատացելոց համար որ ուրիշ պատրիարքութեանց մէջ գաղթած են, և թէ այդ դրութիւնը պէտք է պաշտօնական և հաստատուն ձևի վերածել, հարկաւ թերին լրացնելով և անորոշը ճշդելով։ Սիս Անտիոքայ պատրիարքութեան սահմանաց մէջ է և իւր իրաւասութեան սահմաններն ալ քիչ աւելի քիչ պակաս կը պատասխանեն Անտիոքայ պատրիարքութեան նահանգներուն։ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան կեդրոնին մէջ ալ հայ պատրիարք մը կայ, և սա կիշխէ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան նահանգներուն և աւելի ալ, ի շնորհս քաղաքական տարբերութեանց, որ կը տիրեն Մեծ Հայոց նահանգներուն վրայ։ Երուսաղեմայ պատրիարքական աթոռը ի սկզբանէ հետէ կիշխէր և կիշխէ Հայոց՝ որ կը գտնուին Երուսաղեմայ և Աղեքսանդրիոյ պատրիարքութեանց

սահմաններուն մէջ։ Իսկ Աղթամարայ կաթողիկոսը առ այժմ նոյն ինքն Մեծ Հայոց նահանգներէն Վասպուրականի մի մասը և Կորդուաց և Մոկաց նահանգները ունի, եթէ իր ունեցածը յարգուի կամ ոչ, ըստ մեզ յարմարագոյն կը լինի նկատել զնա իբրև իշխող Հայոց այն երկիրներու՝ որք Պարսից կամ Քաղդէացւոց պատրիարքութեան սահմանին մէջ կը գտնուին։

Մեր նուիրապետութեան երկրորդ աստիճանը կը կազմեն յայնժամ չորս եկեղեցական իշխանաւորք՝ զորս յիշեցինք, Սսոյ կաթողիկոսը Անտիոքայ պատրիարքութեան սահմանաց վրայ, Կոստանդնուպօլսոյ պատրիարքը՝ Կոստանդնուպօլսոյ պատրիարքութեան սահմանաց վրայ, Երուսաղեմայ պատրիարքը՝ Երուսաղեմայ և Աղեքսանդրիոյ պատրիարքութեանց սահմանաց վրայ, Աղթամարայ կաթողիկոսը՝ Քաղդէացւոց պատրիարքութեան սահմանաց վրայ։ Այդ սահմանները այժմ ճիշտ այսպէս չեն, թէպէտ առաջին երեքը մերձաւորապար նման են, ճշդիւը ժամանակին գործ է, մանաւանդ որ խնդրոյն մի մասը մեր կամքէն անկախօրէն քաղաքական իշխանութեանց հետ կապուած է. զի այս իշխանութեան շնորհիւ է որ Կոստանդնուպօլսոյ պատրիարքն իշխանութիւն կը վարէ և Բարձր Հայոց, Զորրորդ Հայոց կամ Ծոփաց, Տուրուբերանի և Աղձնեաց նահանգներուն և ուրիշ նահանգներու մասերուն։ Իսկ Հռոմայ պատրիարքութեան սահմանք և բոլոր տար աշխարհք որ չեն ուրիշ մի պատրիարքութեան սահմանին մէջ, պէտք է ուղղակի կապ ունենան Ս. Էջմիածնի Մայր աթոռոյն հետ։ Երկրորդ աստիճանէ եղող այս չորս եկեղեցական իշխանաւորներէն երկուքը կաթողիկոս և երկուքը պատրիարք անուն կրելնին սովորութեան թողուլ է, զի երկու անուններն ալ ըստ ինքեան տարբերութիւն չունին։ Կաթողիկոս կոչուողները յատուկ օծումմ կընդունին և եպիսկոպոս ձեռնադրելու և մկրտանն օրհնելու ալ իրաւունք կը պահեն, և քանի որ այդ պարագայները սովորութենէ կախում ունին, հնար է սովորութեան պատկառ կալ, մինչև ուր և մինչև երբ որ սովորութիւնը չարգել օգտակար մնանաւանդ թէ կարևոր դատուի։

ԺԲ.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՔ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՔ.

Նաւիրապետութեան դասակարգութեան երրորդ աստիճանն, ինչպէս սկիզբը ըսինք, կըպատկանի մետրապոլիտ արքեպիսկոպոսաց։ Ա. յդ աստիճանը առ այժմ կըպահեմք մեք եպիսկոպոսներու մէջ նախապատիւները որոշելու։ Էջմիածնայ աթոռը կըշնորհէ զայն երբեմն եպիսկոպոսաց ոմանց ի պարզ պատիւ, և Թուրքիոյ եպիսկոպոսներէն շատեր որք հինէն մեծ ճանչցուած վիճակ մը ունին, արքեպիսկոպոս կը կոչուին։ Լաւագոյն կըդատեմք որ թէ ի լրումն նաւիրապետական աստիճանաց և թէ ի դիւրութիւն հոգևոր պաշտամանց, բոլոր իսկ վիճակներն նահանգական դրութեամբ միանան, և իւրաքանչիւր նահանգի գլխաւոր եպիսկոպոսը կրէ արքեպիսկոպոսի այնինքն մետրապոլտի անունը, և վարէ մետրապոլտական պաշտօնը, հսկելով հասարակ թեմական եպիսկոպոսաց ընթացքին և միացնելով անոնց գործունէութիւնը և անոնց հետ ի միասին խորհրդակցութեան ժողով կազմելով ի հարկին։ Նոր նոյ վիճակաց մէջ առաջնորդի և յաջորդի անուններն իսկապէս մետրապոլտի և եպիսկոպոսի յարաբերութիւնները և դրութիւնը կը շօշափեն. կարծես թէ հին դրութիւնը նոր անուններ ունեցեր է միայն, և կարծեմք թէ դժուարութիւն պէտք չէ զարթուցանէ հին դրութեան հետ հին անուններն ալ պահպանելը։

Թուրքիոյ մէջ ալ կան տեղ տեղ փոխ առաջնորդք՝ որք առաջնորդաց ներքև փոքր վիճակները կառավարելու պաշտօն ունին, սոսկ ըրածն ալ հնոյն հետևողութիւն է, և ոչ ոք չէ կարող անիրաւ գտնել, եթէ հին սովորութեան հետ հին անուններն ալ վերակենդանանայ։ Մետրապոլիտ արքեպիսկոպոսունք պէտք է գտնուին թէ ամենայն Հայոց կաթողիկոսութեան ուղղակի հպատակութեան ներքև և թէ վերոյիշեալ չորս աթոռոց, այնինքն մանաւոր կաթողիկոսայ և փոքր պատրիարքաց հպատակութեան ներքև, ուր որ նահանգաց կազմութեան ձևը և հայրենակութեան թիւը պահանջէ անոր գործադրութիւնը։ Մեք չեմք ուզեր անուն և թիւ և տեղ որոշել, զի իւրաքանչիւր անուն բաւական ընդարձակ վիճաբանութեան և

բայսատրութեան կըպարտաւորէ զմեզ, զոր գործոյս բնութիւնը չտանիր, սակայն կարծեմք թէ գոնէ 20 կամ 24 հատ պէտք է լինին Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ մետրապօլիտ արքեպիսկոպոսներն։

Զորօրինակ Մայր Աթոռոյ պատիւն ու ծառայութիւնը, նմանապէս երկրորդական աթոռոց ալ պատիւն կը պահանջեն որ՝ թեմակալ չլինելով եպիսկոպոսական ձեռնադրողթիւն ունեցող եկեղեցականներ գոնուին մեծ կաթողիկոսին և մասնաւոր կաթողիկոսաց և վոքր պատրիարքաց օգնական իբր դրան եպիսկոպոսունք։ Նոյնպէս պատշաճ կըկարծեմք որ Մայր Աթոռոյն ծառայող և վիճակաւոր չեղող եպիսկոպոսներէն ոմանք արքեպիսկոպոսական պատուեալ աստիճան ունենան և Մայր Աթոռոյն նշանաւորագոյն պաշտօններուն կոչուին իբր անմիջական և երիցագոյն գործակից Մայր Աթոռոյն ի կառավարութիւն ընդհանուր եկեղեցւոյն Հայաստանեայց։

Եպիսկոպոսական աստիճանը, որ է հովուութիւն և տեսչութիւն, հաւասար կերպով կըպահուի բոլոր եկեղեցեաց մէջ և կըպահուի նաև Հայաստանեայցս եկեղեցւոյն մէջ, այս տարբերութեամբ միայն որ երբ ուրիշ եկեղեցիք թեմակալ կամ վիճակաւոր եկեղեցականը նովին իսկ եպիսկոպոս կը ճանաչեն և եպիսկոպոսական ձեռնադրութեան կը կոչեն, մեք սովորեմք ձեռնադրութիւնը պաշտօնէն զատել, և պարզ վարդապետաց եպիսկոպոսական պաշտօն յանձնել առանց ձեռնադրութեան, և այդ դրութեան յատուկ անուն մըն ալ շինուած կայ որ է առաջնորդ անունը. բայց հին եկեղեցւոյն սովորութիւնն ու յիշատակները չեն արդարացներ այդ ոճը։ Մէջին դարերու ստիպեցուցիչ ձախող արկածք ստեղծեցին զայդ, և կարծես թէ այդ բանին այժ մը աւելցուցած են Թուրքիոյ մէջ առաջնորդաց քաղաքական արտօնութիւններով ճոխացած լինելը, և հոգևորէն զատ արտաքին գործոց ալ միջամտելը, և սահմանադրական վարչութեան նախագահելը, և այդ պատճառներով գրեթէ շարժական դիրք մը ունեցած լինելը։ Առաջնորդաց շարժական և յար փոփոխական չըսեմք տատանեալ դիրքը և անտի քմահաճ ընթացից առիթ տուուիլը ծանր մեղադրանքներ և գանգատներ կը յարուցանեն առաջնորդութիւն վարող վարդապետներու վրայ, և ծանր և

ան հաճոյ հրապարակական ակնարկները կը լինին անոնց դէմ։ Կը կարծեմք որ եթէ այդ մասին նախնական ոճոյն և սովորութեան դառնանք, և ամեն հովուութեան կամ հոգևոր տեսչութեան, այսինքն եպիսկոպոսական պաշտաման կոչուած եկեղեցականք պաշտաման հետ ձեռնադրութիւն ընդունին, աւելի ազդեցիկ և աւելի արգասաւոր պիտի լինին իրենց պաշտօնավարութեան մէջ։ Եւս և ուրիշ եկեղեցեաց եպիսկոպոսաց քով ստորնագոյն դիրք մը ունենալէ զերծանելով, աւելի և պիտի փառաւորեն իրենց եկեղեցին և իրենց պաշտօնը, իրենց աստիճանը և իրենց ժողովուրդը։ Առաջնորդ վարդապետները կամ առանց ձեռնադրութեան եպիսկոպոսները ունենալու ոճը յետին ժամանակաց մէջ ստեղծուած է, և ոչինչ կտիպէ զմեզ պահել ոճ մը որ կը յիշեցնէ մեզ մեր ձախող օրերը։ Քանի որ քաղաքական արտօնութիւնք և լաւագոյն ժամանակք դիւրութիւն կընծայեն մեզ ի լաւէն ի լաւագոյն դիմել և ձախող ժամանակաց ժանգը թօթափել և նախկին փառօք նորափետուր զարդարիլ, ինչո՞ւ օգուտ չքաղել և աղգուտագոյն հովուութեամբ աղգուտագոյն և չըպաշտպանել մեր ժողովուրդը։ Մանաւանդ Թուրքիոյ մէջ շատ զգալի է այն ձախող դիրքը, որ սովորական է մեր ժողովրդեան գլուխներուն, երբ ուրիշ ազգէ և ուրիշ դաւանութենէ ժողովրդեան գլուխներու հետ բազդատութեան մէջ կը գտնուին ժողովներու և արուարձին գործերու մէջ, և մինչ Յոյն և Հռովմէական և Ասորի առաջնորդք ամեն տեղ ձեռնադրեալ եպիսկոպոսներ են, մերքն պարզ վարդապետութեամբ ստորնագոյն կը մնան և նուաղ քան զնոսա պատիւ և ազդեցութիւն կունենան։ Իսկ առանց ձեռնադրութեան առաջնորդաց դիւրաւ փոխոխուելուն պարագայն չեմք կարծեր թէ եկեղեցւոյ և ժողովրդեան դիւրութիւն մը ընծայէ, մանաւանդ թէ մէկ կողմէն առաջնորդը նուաղ փութաջան կընէ անհաստատութեան երկիւղիւ, և միւս կողմանէ ժողովուրդը աւելի խրոխտ և նուաղ հնազանդ կընէ մերժելու ակնկալութեամբ։ Այս չափս ալ բաւական լինի եպիսկոպոսաց վրայ, որք են չորրորդ աստիճանի իշխանք եկեղեցւոյ։

Եկեղեցական յիշատակաց մէջ կը յիշուին և քորեպիսկոպոսք, անուն մը որ այժմ բոլորովին գործածութենէ լինած

է, սակայն պաշտօնը խափանուած չէ։ Ռուսիոյ մէջ բարեկարգիչ անուանեալ եկեղեցականք կամ մեսնաւոր հոգեւոր կառավարութեանց գլուխը, և Թուրքիոյ մէջ առաջնորդական փոխանորդք և քարոզիչք և տեղական հովիւք գործով և պաշտօնով քորեպիսկոպոսներէ չեն տարբերիր։ Ասինք թէ եպիսկոպոսը վիճակի մը գլուխ է, և վիճակ է քաղաք մը իւր շրջակայ գիւղերով։ Եպիսկոպոսն պարտաւորեալ լինելով քաղաքին մէջ մնալ և միայն մերթ ընդ մերթ կարող լինելով այցելել գիւղօրէից, պէտք ունի փոխանորդներ պահել, որք գլխաւոր գիւղերու կամ աւաններու կամ գիւղօրէից խումբերու կամ շրջանակներու մէջ ըստ բերմանց քաղաքական և աշխարհագրական բաժանմանց եպիսկոպոսին կողմանէ վարեն հսկողութեան պաշտօն մը, այնչափ իրաւասութեամբ և պաշտօնով, որչափ եպիսկոպոսին կամքն ուզէ յանձնել անոնց։ Քորեպիսկոպոսութիւնը պարզապէս պաշտօն մը լինելով քահանայութենէ զատ աստիճան չունի, և միայն երբեմն պատահաբար հանդիպած է որ եպիսկոպոսութեան ձեռնադրութիւն ունենան, տուեալ կամ ի պատիւ անձին կամ ի պատճառս ծանրակշռութեան վիճակաբաժնին։ Նմանապէս սովորական չեմք կարծեր որ այդ պաշտօնը վարդապետաց տրուած լինի, թէպէտ շատ յարմար կը դատիմք այդ պաշտամանն վարդապետաց յանձնուիլը։ Ընդհանրապէս քահանայից մէջէն արժանաւորագոյնք այդ պաշտօնի կոչուած են, և այժմ ալ Ռուսիոյ բարեկարգիչք և Թուրքիոյ փոխանորդք սովորաբար քահանայներէն են։ Քանի որ այժմեան գրութեան վրայ մեծ փոփոխութիւն չլինիր, և քանի որ ուրիշ դժուարութիւն մը չտեսնուիր, ըստ մեզ ցանկալի է հին ոճոյն և հին անուան պահպանութիւնը։

(Շարունակելի)

Մաղաքիա Եպիսկոպոս։

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՆԱԳՕՍԿԱՑՆ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՔԵՏՅ.

(Շարունակ. Աբաբայ, Ը. Բ.).

ՑՕԴՈՒԱԾ ԺԲ.

ԵՐԵՔ ԽՈՐԱՆՔ Ի ՀԻՒՍԻՍԱԿՈՂՄՆ.

Ի Հիւսիսակողմն Համաղասպ կոչեցեալ շինուածոյն են ի միում կարգի մերձ առ միմեանս երեք խորանք պատարագի, միաձեք և միակերպք համակ կերտեալք ի սրբատաշ աղնիւ քարանց։ Զառաջին խորանն ի թուին ՈԿ (1211) շինեաց Նահատակին որդի Սմբատայ Թոռն Ուքանայ և եդ ի տեղւոջս աստ ղգերեզմանս տոհմին իւրեանց, նուիրեաց սուրբ նշանիս ՔՈւոյն զԱրևուանքն շինական և զկեչենուտի այգին, զոր Թագաւորաց Թագաւորն Գէորգի և դուստր նորա Թամարն տուեալ էին նոցա վասն շատ ծառայութեանց իւրեանց։ Երկրորդ խորանին «Սուրբ Ցարուխիւն» կոչեցեալոյ խաչն անկեալ կործանեալ կայ, ուստի և չունիմք տեղեկութիւն ինչ։ Զերրորդ խորանն շինեաց ի թուին Հայոց ՈԿԹ (1220) Իշխանաղնեայ Քուրդն, որդի Սմբատայ եղբայր Տեառն Բարսղի, նաև զպարիսպն ի վերայ հանգստարանի իւրոյ, բայց ոչ ժամանեաց աւարտել զշինութիւնն, զի կոչեաց զնա Տէր, ուստի որդիք նորա Սմբատ և Ուքան կանգնեցին զխաչն և օրհնեցին զեկեղեցին վասն յիշատակի և փրկութեան հոգւոյ իւրեանց։

Արձանագիր ի վերայ ահեղափառ գեղեցիկ խաչին առաջին խորանի. ուր Աստուածածինն ունի ի գիրկս իւր զմանկացեալն Յիսուս, և հրեշտակ Տեառն բուրվառ ի ձեռին առնէ զխընկարկութիւն «Ի թուին Հայոց ՈԿ (1211) անուամբն Աստուծոյ ես Նաշմադինս որդի Սմբատայ՝ Թոռն Ուքանայ և որդիք իմ Սմբատ և Վահրամ յուսացաք ի սուրբ Նշանն Հաղբատայ և եգաք ի տեղւոջ աստ ղգերեզմանս մեր և զոր Թագաւորաց Թագաւորն Գէորգի և դուստրն նորա Թամար վասն շատ ծառայութեան ՔՈւոյն սիգելով մեզ էին տուեալ և որ անդ զԱ-

բևռունքն շինական և գկեչևնուտի այգին վանն Զաքարիայի Շահնշահին և Իվանէի արևշատութեան և մեր մեղաց թողութեան։ Եւ տէր Յովհաննէս և միաբանքս եռուն մեզ գՀոգւոյ Գալստեան պատարագն, և զայն աւրն՝ որ մեզ տուաճ է, ի մեր արգեանց սեղան գնեն. ոմ խափանէ մեր մեղացն տէր է. և որ կատարէ, աւրհնին յԱստուածոյ »։

Ի վերայ ճակատագրին երկրորդ խորանին, գրեալ է։

« Սուրբ Յարութիւն աւգնեա ապաւինելոյս ի քեզ Բարսղի »։

Ի վերայ գեղեցկանկար խաչին որ ի գլուխ երրորդ խորանին. ուր երևի պատկեր Աստուածածնի բարուր կապեալ ի գոգս իւր զմանկացեալն Յիսուս։

» Ի թուին Հայոց ՈԿԹ. (1220) յառաջնորդութեան Տեառն Յովհաննիսի սուրբ ուխտին Հաղբատայ ես Քուրդս*) որդի Սմբատայ՝ եղբայր Տեառն Բարսղի շինեցի զեկեղեցիս և զպարիսպս ի վերայ հանգստարանի իմոյ վանն փրկութեան Հոգւոյ իմոյ և ոչ ժամանեցի կատարել, զի կոչեաց զիս Տէր. և մեք Սմբատ և Ուքան որդիք նորա կանգնեցաք զխաչս և աւրհնեցաք զեկեղեցիս, որք երկրպագէք յաղաւթս ձեր յիշեցէք զմեզ և զծնողս մեր »։

Առ դրան խորանացս են դասակարգ դամբարանք մեծի ականաւոր ի խանացն Նաշմադինայ և որդւոյ իւրոյ Սմբատայ, Վահրամայ նաև մեծի իշխանին Քուրդ, և որդւոյ իւրոյ Սմբատայ և Ուքանայ և այլոց բազմայ տոհմիւ սոցա։

ՊԱՐԻՍՊՆ.

Այժմեան պարիսպն Հաղբատայ վանից ունելով զհին հիմնարկութիւն և ի տեղիս տեղիս կիսով չափ նորոգեալ պահպանէ տակաւին զհին բարձրացեալ կիսաքանդ շինուածս։ Հնագէն պարիսպն բոլորակաձև է, ի ԺԳ. դարուն իշխանն

(*) Ո՛վ է այս Քուրդ իշխանն, և յո՞ր ազգատոհմէ են սերունդք սորա մինչև յայսօր չէ յայտնի. զսմանէ ոչ ի պատմութեան և ոչ յարձանագրութեան գտանեմք զտեղեկութիւն. բայց զայս միայն բացաբանեմ, թէ աստ յիշեալ Քուրդն, ոչ է Ամիր-Քուրդն Սաստունեան Արծրունին յիշատակեալն յարձանագիրս այսր վանից № Թ. Հատուած Յ։

Հայոց Քուրդ որդի Սմբատայ ընդարձակեաց զալարխպն ի հիւսիսոյ կողմանց յարևելս։ Երկայնութիւն պարսպի յարևելից յարևմուտս է հարիւր քայլ. իսկ լայնութիւնն աւելի քան զնոքաւն քայլ։ Ի հին շինուածոյ կանգուն մնացեալ են միայն յարդ արևմտեան որմունքն և երկոքին կամարաշէն հայկական դրանքն. յորոց վտքրագոյնն քայ է դէպ ի գիւղն Հազբատ, իսկ միւս լայնարձակն յարևելից կուսէ դէպ ի յայգիքն, ուստի գայ մտանէ սառնակրեայ ջուրն ի վանս։ Սրևելեան դուռն շինեալ Համազասպ արքեպիսկոպոսն որպէս յուցանէ Համառօտ արձանագրութիւնն վտքր խաչաքարին ի մէջ որմոյ պարսպին արտաքուստ։ «Ի թուին ՈՂԵ. (1246) յաւաջնորդութեան տեառն Համազասպայ շինեցաւ....։

ՅՈԴՈՒԱԾ ԳՂ.

ՎԱՐԺԱՐԱՆ (ՁԻՊԱՀԱՆՔ)

Առաքի հրաշակերտ զանգակատան Հաղբատայ ի հիւսիսակողմն ի վերայ արձակալայրի կառուցեալ կայ քարաշէն գեղեցկայարմար Վարժարան, բաժանեալ յերկուս արձակ դահլիճս ճարտարաշէն կամարօք և երկու մեծամեծ գմբէթայարկ լուսամուօք, երկայնութիւն որոյ է 43 արշին, իսկ լայնութիւն 13։ Սակայն չունելով յիւր վերայ արձանագրութիւն ինչ, չէ յայտ, թէ երբ, յումմէ կառուցեալ է այս ազգօգուտ վարժարան վասն կրթութեան աշակերտելոցն ի մենաստանի սոսա։ Միմիայն արձանագրութիւն՝ որ ի վերայ որմոյ խորանին ձախակողմեան դասու մեծի գաւթին յիշէ զանուն նուիրողի ձիթահանքին ի մենաստանս այսու վերոտառութեամբ. «Ես Մամախաթուն տվի զձիթահանքն, որ ի Վահրամայ որդեացն գնեցի՝ և զմի տին. որ երբ ժամն մերն լինի, զտեղանն մեր յանուն դնեն. ով խափանէ և յետ առնու զձիթահանքն ի վնասից զվերոգրեալ նզովն առցէ։» Այլ թէ այս վարժարանի շինուածն է Ձիպահանէն, զոր այժմ յետագայք առհասարակ կոչեն ձիթահանք սակս գտանելոյ ի մէջի նորա քանի մի պարագայից ձիթահանութեան, տակաւին չէ յայտ. սակայն ըստ գրչի ձեւակերպութեանն և ըստ յարմար շինուածոյն առաջել բերէ ղնմանութիւն վարժատան քանէ հնչին ձի-

թահանքի, որոյ վանն չէր պիտոյ կառուցանել այսչափ մեծավայելուչ շինուածս. վասն որոյ եւ զայս մեծակառոյց շինուածս կոչեմ իսկապէս վարժարան. ուրանօր երբեմն ղվարժապետութեան պաշտօն կատարեցին բազումք ի բանիբուն վարդապետոյ վանիցն, մանաւանդ Յովհաննէս Պլուզ վարդապետն Երզնկացի, և միւս Յովհաննէս վարդապետ սարկաւագ կոչեցեալն, որ ստացաւ զաշակերտս բազումս, յորս յանուանէ յիշատակին՝ Երեմիա, Խաչատուր, Գրիգոր և Յովհաննէս Անեցիք: Այս վանական վարժարան ի ծաղկեալ դրութեան կայր շարունակ ի ժ. դարէ մինչև ցԺԴ. դարն:

ՅՕԴՎԱԾՔ ԺԴ.

1) ԱՂԲԻՒՐՆ:

Արտաքոյ պարսպի վանացն է պատուական աղբիւր ցուրտ ջրոյ գեղջն, որ բղխեալ ի լեառնէ Սուրբ - Լուսոյ բերեալ է ընդերկրեայ խողովակօք մինչ ցեղբ գեղջն, ուրանօր կառուցեալ է ի վերայ աղբերս գեղեցկայարմար կամարօք քարաշէն սրահ մեծ. յորում բղխեալ ջուրն հոսի ի հինգ քարեայ կերտած մեծամեծ աւազանս: Կից այսր ստուածահաճոյ շինուածոյս է արձակ քարակերտ լիճն, ուր ժողովեալ ջուրըն ելանէ յոռոգումն պարտիզայ և ծաղկոցաց գեղջն:

Այս շինուած կառուցեալ է ի հայր Յովհաննիսէ արդարավառտակ առաքնորդէ տեղւոյս ըստ արձանագրութեանն որ ի ճակատ կամարին:» Ի թուին ՉԽ (1258) «Հաստատուած կամարակապս ի Հայր Յովհաննիսէ ի հալալ ընչից իւրոց. որում ողորմեսցի Քրիստոս՝ տալով հոգւոյ նորա ի լուսեղէն յարկաց և յանմահական ջրոյն. Ամէն:»

Ի կամարակապ շինուածոյդ աղբերն ուղղակի հարթ ճանապարհաւ երկու մղոնաչափ հեռաւորութեամբ գնացեալ յաթևելս կոյս դէպ ի լեառն Սուրբ Լուսոյ յանդիման լինի ի ձորակի միում քարակերտ շինուածս. որ կոչի Աւազան ի ձև միոյ մեծ աղբիւրի մատրան յորում բղխին յերկուց կողմանց — յարևելից և ի հարաւոյ յորդահոս աղբիւրք ցուրտ ջրոյ բերեալք ընդերկրեայ խողովակօք ի մերձակայ լերանց և հոսին ի քարակերտ աւազանն և ատտի նմանապէս խողովակօք տարեալ են մինչև

ցեղը գեղջն։ Այս քարակերտ փոքրիկ հինուածք յաւուրս մեր կառոյց Անտոն արքեպիսկոպոսն ի մաքանուրթենէ էջմիածնի որ զհետ սրբազնագոյն Եփրեմ կաթուղիկոսի ամենայն Հայոց եկեալ ի 1822 ամի ի տուրբ Նշանի վանս Հաղբատայ և տեսեալ թէ ի տեղւոջէ աստի մինչև ական տեղին Քօռ-աղբիւր խախտեալ են խողովակքն բոլորովին, վանորայ սիրովն Աստուծոյ յանձն առեալ վերստին նորոգեալ զբոլոր ուղին ջրոյ ի հալալ ընչից իւրոց զամենայն ծախսն վճարելով որպէս երևի յարձանագրութենէ աստի։

Զոլացուսցէ Տէր զհոգին
Անտոն արքեպիսկոպոսին.
Աստի մինչև ական տեղին
Նոր նորոգեաց արդեամբ անձին։
Տեղեաւ էր սա երևանցի
Բնիկ մինաքան էջմիածնի։ Ի 1827 ամի։

Այժմ յաւազանէ աստի մինչև ցկամարակապ շինուածն ազբեր յեղր գեղջն ջրաբեր ընդերկրեայ խողովակքն իսպառ խախտեալ են. և ջուրն ի բաղում տեղիս բացուած առուօք գայ սակաւուք հասանէ ի գիւղն։ Նորոգութիւն շինուածոյ ջրաբեր խողովակացս կարօտի 300 մանէթի և յուսամ զի ոմանք յաստուածասէր անձանց յանձն առցեն զայս շինութիւն ի յիշատակ անուանց իւրեանց։

2) ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ։

Ի յեռուստ Հայոցապ շինուածոյն ազբեր սկսեալ մինչև ցանապատ կոչեցեալ կուսանաց եկեղեցին գտանի ի վերայ գաշտաձև Բլրոյ խաչազարդ գերեզմանատունն հասարակաց, ուր բաց ի հոյակապ և ի ստուար տապանաքարից գտանին գեղեցկաքանդակ խաչք հանդերձ արձանագրութեամբք. և քանի մի խաչաքարք անկեալ կործանեալ են յաշխարաւեր թշնամեաց կամ ի հնութենէ ժամանակին, որոյ պատուանդանի ստուար քարինքն այժմ տեսանին։ Ւեալ է աստ և սրբաշէն մատուռն յանուն սրբոյն Մինասայ զօրավարին, զոր ի յեռին ժամանակս իսպառ քանդեալ են և զքարինս նորա ի գործ եդեալ են վանն շինութեան մեծի կաթուղիկէ եկեղեցւոյն։ Ի հիւսիսակողմն գերեզմանատանս գտանի այլ աւերակ մատրանաձև

շինուածոց յանհարթ քարանց, առ որով շար ի չար ամփոփեալ կան մարմինք հին և նոր ննջեցելոց։

Մերձ շինուածոյ աղբեր յարևմտեան կողմն գերեզմանատան հսկայաձև կանգնեալ կայ ի վերայ երկուց աստիճանաց բարձր կապուտակ խաչ քարեայ յանուն սրբոյն Սարգսի զօրավարին, զորմէ ասեն ժողովրդականքն գոլ ոստ (ճիւղք) Սարի — Սուրբ — Սարգիս եկեղեցւոյն՝ որ ի Խաչի — գրան։ Այս բարձր խաչաքար ունի ի թիկունս իւր այսօրինակ արձանագրութիւն։

« Շնորհիւն Աստուծոյ ես Յակոբ և Մարգարէս յառաջնորդութեան Տեառն Համազասպայ՝ կանգնեցաք զսուրբ Սարգիս բարեխաւս մեզ և Մխիթար վարդապետին Քոբայրեցւոյ և հաւր Բարսղի և ննջեցելոյ մերոց։ Որք երկրպագէք Քրիստոսընկալ սուրբ նշանիս զմեզ յաղաւթս յիշեսջիք ի Տէր։ Յիշողդ աւրհնիք ի Տեառնէ։ » Ի թիւս ՉԴ։ (1275)։ » Առաջի խաչիս գտանին կից առ միմեանս հինգ գամբարանք շիրմայոյ, պատուեալք ստուար կոփածոյ քարամբք, յորոց երեքն ունին օրօրոցաձև կրկնակի բարձր տապանաքարս ի վերայ գեանամածատակ քարանց առանց արձանագրութեանց։

Փոքր ինչ հեռի ի սոյն խաչաքարէ կանգնեալ կայ կարմրաշէկ քարեայ խաչ ի վերայ բարձր պատուանդանի ունելով զայս արձանագրութիւն։

« Ի թուին ՈՃԶ։ (1207) կանգնեցաւ նշանս տէրունական ի վերայ Հանգստարանի պատուական քահանային Գրիգորոյ, որք երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս։ »

Մերձ սորա ի վերայ գեղեցկաքանդակ խաչաքարին փորագրեալ է։ « Ի թուին ՈՂԶ։ (1247) կանգնեցաւ խաչս ի վերայ Հանգստարանի անպիտան աբեղայիցս — Անդրէասի, Պաւղոսի և Յովսէփայ, որք երկրպագէք յաղաւթս յիշեսջիք։ »

Ի միջակեդրոնի գերեզմանատանն գտանի ծաղկազարդեալ խաչ այսու արձանագրութեամբ։

« Ի թիւս ՈԶ։ (1231) կանգնեցաւ խաչս ի վերայ Հանգստարանի սուրբ քահանայի Յովհաննիսի և նորին հարազատի Գրիգորոյ և Սողոմոնի և այլ ընտանեաց նորին և եղբաւր որդեաց Աստմայ և Աբրահամու, որք երկրպագէք, յաղաւթս յիշեցէք։ »

Բայց յայսոսիկ խաչաքարացս բարձր ի վեր կանգնեալ կան

ի վայրի այսը գերեզմանատան ի վերայ միակտուր ստուար պատուանդանայ յոլով խաչաքարը, շքեղազարդեալք վայելուչ քանդակագործութեամբք, յորոց մի քանիքն են առանց արձանագրութեանց և մի քանիքն իսպառ եղծեալ կան անվերծանելի արձանագրութեամբ: Յայսմիկ գերեզմանատան գտանին բազում օրօրոցաձև տապանաքարք, մաշեալք ի հնութենէ ժամանակին, յորոց յոլովք ուշին զսուզ մակագրութիւն ինչ՝ զորօրինակ՝ « Սարկաւագ էրէցն է »՝ « Մարգարէ » « Զինաւոր » « Վասակ » « Հասան » « Դաւիթ »՝ « Խաթուն »· կարծեմ սա է այն Խաթունն յաղգէ Դէսումեանց որ շինեաց զեկեղեցին սուրբ Աստուածածնին: Նաև ի վերայ սակաւուց փորագրեալ է թիւ մահուան: Են և յոլով գերեզմանք· որ ծածկեալ կան իսպառ ընդ հողով· մանաւանդ միջակեդրոնի և հիւսիսակողման գերեզմանաքարքն· և մեծի աշխատանաց պէտք են առ ի բանալ զստորերկրեայ հողաթաղ շերիմն և յօրինակել անտի զտապանագիրս ծածկեալ գերեզմանացն:

(Կը շարունակուի)· Ռուստամ—Բէկ Նրշնկեանց·

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ ՍԵՐՆԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ·

(Շարունակ· վերջ Ա֊թուոյ, Բ· Գ·)։

Է·

Ա֊յս գլխաւոր բաներն են պահանջում ահա դպրոցներից բժիշկները դալոց սերնդի առողջութեան համար: Բայց բժիշկները չեն սահմանափակվում միայն սոցանով, այլ առաւել հեռուն են գնում: Նոքա յարձակվում են աշակերտների սաստիկ երկար—վեց կամ եօթն ժամեան նստողական դրութեան վերայ, այս դրութեան և այս հանդամանքների մէջ և մարմնամարզութեան չամարուա թէ չլինելու վերայ, որովհետև այդ առարկան սահմանափակվում է շաբաթը մէկ կամ երկու ժամ դասամիջոցով: Ա֊յսպէս 1871 թուի Հոկտեմբերին Բերնոկիմի դպրոցական ժողովը քննութեան ենթարկից այս հարցը: Նա հետևեալ եզրակացութիւնները ընդունեց· դպրոցը իւր կազմութեան և իւր գործունէութեան մէջ պէտքէ համապատասխանի հետևեալ գլխաւոր պահանջներին· նպատակայարմար կազմութիւն

դպրոցական տների և նոցա տեղաւորութեան ու բռնած տարածութեան վերաբերութեամբ, լուսաւորութեան, տաքութեան, նստարանների և սեղանների, այլև խաղերի և մարմնամարզութեան տեղի վերաբերութեամբ. նա պիտի հոգ տանի մարմնական զարգացման վերայ մարմինը լաւ պահպանելով, մանկավարժական մարմնամարզութեան միջոցով և ազատ շարժողութիւններով բաց օդի մէջ. նա պարտաւոր է դաստատութեան ժամանակ ուշադրութիւն դարձնել աշակերտի մտաւոր և ֆիզիքական զարգացման և ընդունակութեանց աստիճանի վերայ. նա պարտաւոր է դգուշանալ ուղեղի և աչքերի միակողմանի և վնասակար բաներով պարապեցնելուց. նա պէտք է սահման դնի տանը սովորելու դասեր տալու համար և պէտք է ընտրութիւն անէ արձակուրդներին տրուած պարապմանց մէջ. խիստ հսկողութիւն բարեխիղճ կարգապահութեան վերաբերութեամբ. հեռատեսութիւն պատժի գործի մէջ. որքան կարելի է՝ խուսափումն մարմնական պատիժներից, կարևորութիւն ծանօթացնելու մարդոյ կազմուածքի բնական զարգացման պայմանների հետ որ ստացվում է առողջապահութիւն սովորելով. խոսե- կոպրո-ն բ-չլ-ս - ոսպկանական բրո-ներնոց, վ-բակիչ հի-անդո-ներնոց վերաբերո-ներնոց: Բացի ձեջ կայ մի մշտական մասնաժողով որ հոգում է դպրոցների առողջապահութեան վերայ: Միևնոյն նպատակով հիմնուած է այնտեղ մարմնամարզների ընկերութիւն, որոց համար կարգացվում են ժողովրդական մարդպահազմութեան, բնախօսութեան և պահեցողութեան կուրսը: Ընկերութիւնը լոյս ունի, որ և միւս ուսուցիչները խօսել չեն մնալ իւր լեկցիաների առաջ, որովհետև մանկանց առողջութիւնը շատ նշանաւոր է և իւրաքանչիւր ուսուցիչ պէտք ծանօթանայ մարդու կազմուածքի պահանջների հետ:

Գերմանացիք և անգղիացիք քանի գնում, այնքան աւելի արդարացի են համարում յարձակուիլ դպրոցի վերայ և մարմնամարզական վարժութիւնները բեռնաթօթ և անգղիացոց դպրոցներոմ սկոտ են աւելի դէպ կերպարանք առնուլ: Մինչև անգամ գիւղական դպրոցներում անգղիացիք մտցնում են եթէ ոչ մարմնամարզութիւն, գէթ դրութեանց փոփոխութիւն, որպիսիք ընդունում են մանուկները դասերի ժամանակ. այնտեղ մանուկները դասերի մի մասը սեղանների յետևը նստելով են անցկացնում, միւս մասը անցնում են նստելով առանց սեղանների, թիկն տալով նստարանի թիկունքին, իսկ դասերի միւս մասը կանգնելով են անցկացնում: Այսպիսով աշակերտները ամեն մի դասամիջոցում տեղերից շարժվում են և այս կերպով նոցա մարմինը զանազան դրութիւններ է ընդունում և մի քանի ժամերի ընթացքում անհանգիստ լինում: Բացի դորանից Անգղիայում մեծ նշանակութիւն ունին զանազան տեսակ խաղեր, ինչպիսին է կրիկէտ անունով խաղը, որ դպրոցներում ընդհանուր գործածութեան մէջ է գտնվում: Գերմանիայում և Շվէցարիայում երիտասարդ մարդոց մեծ մասը մարմնամարզական ընկերութեանց մէջ կազմում են շատ գործունեայ անդամներ. բացի դորանից Շվէցարիայում կանոնների դպրոցաց աշակերտները ամեն ժամանակ սովորում են զինուորական կրթութիւն և վարժվում են հրացանաձգութեան

մէջ, «կրտսեր աշակերտներից» ասում է Դիկսօնը. — քիչ է պահանջվում. նոքա կանգնում են կարդով, վարժվում են խմբովին կարդով պտոյտներ անելու մէջ և իմիասին հրացան են արձակում. Ցետոյ նոցա թոյլ են տալիս խաղալ, բայց նոյն իսկ խաղը ոչ այլ ինչ է, եթէ ոչ զինուորական կրթութեան մի պայքար. նոքա արշաւում են, ցատկում են, խաղագունդ են արձակում և աշխատում են ճապաւներով միմեանց բռնել. Նոցա ամենասիրելի խաղն է վազվզել գետնի մէջ ցցուած սրի շուրջ և աշխատել բռնել միմեանց. Սոցա նման ոչ մի բան մենք չենք տեսնում մեզանում. Մեր դպրոցների մէջ մարմնամարզութեամբ պարապում են շաբաթուայ մէջ միայն մէկ կամ երկու անգամ, գործնական, մկանունքները զարգացնող և ամրապնդող խաղեր մեզանում համարեա թէ չկան. վերջին ժամանակներս մինչև անգամ մենք նկատում ենք պարերի դասերի աչքից ընկնիլը, դորանով պարապում են միայն կրտսեր աշակերտները, և այն ոչ աւելի քան մէկ դաս շաբաթուայ մէջ, մինչդեռ պարը, երբ մարմնամարզութիւն չկայ, այնուամենայնիւ կծառայէր իբրև ֆիզիքական վարժութիւն. Բայց տարաբաղդաբար մեզանում շատերը երեւակայում են, թէ պարերը սովորում են միայն նորա համար, որպէս զի ձիւթած ու յղկած տախտակամածների վերայ խաղան. դորա համար էլ ծանրաբարոյ երիտասարդութեան մի նշանաւոր մասը այդ պարապմունքի վերայ ծիծաղելով է նայում. Բայց մենք կարող ենք հաստատացնել այդ երիտասարդներին, որ իւրեանց ծանրաբարոյութիւնը պահպանելով հանդերձ, լաւ կանէին, որ միևնոյն ժամանակ աշխատէին զարգացնել իւրեանց մարմինը դոնէ պարերի օգնութեամբ. Մարմնամարզութեան անդը կարող էին բռնել արհեստներով պարապելը, ինչպէս են օրինակ հիւանդութիւնը կամ տակառագործութիւնը, բայց դժբաղդաբար մեր բոլոր դպրոցները, որտեղ մուտք էին գործած արհեստներով պարապելը, այդ դէպքում չափից դուրս անտեղի և անխորհուրդ կերպով վարուեցան. Նոքա ձեռք վարկին կազմարարութեանն ու սղոցով զանազան փոքրիկ բաներ շինելու արհեստին. Այդ արհեստները ինքնըստինքեան քիչ գործնականութիւն ունին և դորանցից ստացուած օգուտը շատ աննշան է. դրքեր կազմելն ու փայտից զանազան առարկաներ սղոցելը շռայլութիւն է և ուրիշ ոչինչ. Այդ արհեստներով փող աշխատել չի կարելի. Նոքա չեն կարող օգնել մարդուն և այն ժամանակ, երբ բաղդը կձգէ նորան խնդճ դրութեան մէջ. Ուրեմն, դպրոցի մէջ այդ պարապմունքները մտցնելու միակ պատճառը կարող էր լինել մարմնաւոր ուժի զարգացումն. Բայց վերոյիշեալ երկու արհեստներով պարապելիս էլ համարեա թէ մարդու ֆիզիքական ուժերն չեն զարգանում, իսկ այդ պարապմունքներից վերջինը չափից դուրս մնասակար ներգործութիւն է անում մարդուս վերայ, որովհետև անդադար նայում են սղոցի մեքենայի մօտ և անդադար գործում են մի ոտքով բանուելով աչքերը մեքենայի վերայ փայտի մանր փոշին անդադար թափվում է կոկորդն ու քիթը, աչաց տեսութիւնը սաստիկ լարուած դրութեան մէջ է լինում, որ դէպքում և լոյսը անդադար առջևից է ընկնում. —

այս բոլորը չափից դուրս վնասակար է մատղաշ կազմուածքի տէր անձանց։ Ես վազ ժամանակներից սկսած հետաքրքրւում եմ մանկավարժական հարցերով, բաւականին ուշի ուշով պտնել եմ այդ տեսակ պարագաները և կարող եմ լիակատար համոզմամբ ասել, որ նա ո՛չ միայն թուլացնում է աչքերը, ո՛չ միայն գրգռում է նեարդները, այլ յաճախ ես տեսած եմ երիտասարդներ, որք շարունակ սղոցելուց ստացել են պեռական գրգռումն, որ ի դէպ ինքն ըստ ինքեան հեշտութեամբ է բացատրւում։ որովհետև սղոցող մարդը ստիպուած է լինում շատ պինդ նստել աթոռի վերայ, որով և չի կարողանում յենուիլ յատակին երկու ոտներով — այս բանը պէտք է յառաջացնէ արեան ժողովումն յետոյքի մօտ. յետոյքի մսերի թեթև բայց անընդհատ շօշափումն աթոռին, սորա հետ կապակից է և ոտքի անդադար շարժողութիւնը, որ երբեմն պատահ է լինում նեղ անդրավարտիքով. այս բոլորը յառաջացնում է սեռական գրգռումն։ Մենք տեսանք մի երիտասարդ, որ բոլորովին կորցրեց իւր ատողջութիւնը սաստիկ յափշտակուած լինելով զանազան անպէտք բաներ սղոցելու մէջ։ Ա՛յսպիսի հետեւանքները շատ կծանրանան, եթէ որ մենք առանց ուշադրութեան թողունք նոցա. սակայն սղոցային մեքենաները ոչ միայն ծաղկում են մի քանի դպրոցներում, այլ սկսում են մեծ քանակութեամբ մուտք գործել և մասնաւոր տներում՝ առաջ հկող սերնդի դաստիարակութեան համար. չնայելով որ այդ գործիքը կեանքի մէջ բոլորովին անպէտք է և սաստիկ վնասակար առողջութեան համար։ Երբ որ մօդայի չնորհիւ գործածութեան մէջ մտան վէլօսիպէդները, և որոնցով մայրերն ու հայրերը նոյնպէս յաճախ վարժատրում էին իւրեանց զաւակներին, պ. Օպպօլցերը նկատեց «Ըստ երևութին մարդիկ քիչ են համարում մոլանում երևող մահուան այն ահագին դէպքերը, ըստ որում այլապէս չի կարելի բացատրել այն եռանդը, ինչ եռանդով որ ամենայն տեղ սկսեցին ղբաղուիլ և զուարճանալ վէլօսիպէդներով։ Կարծիք չկայ, որ վէլօսիպէդները կառավարելու համար պահանջուած մկանութիւնների չափից դուրս ձգողութիւնն ու լարուածութիւնը հեշտութեամբ յառաջացնում է ո՛չ միայն մկանութիւնների և սրտի մեծանալն իւրեանց չափով ու ծաւալով, այլ պատճառում է սրտի այլ և այլ հիւանդութիւններ, իսկ յաճախ ուղղակի»։ Բայց աւելի սաստիկ պէտք էէ՛ կենալ սղոցելու մեքենաներին մանաւանդ այն ժամանակ, երբ այդ մեքենաները գործ են ածում մարդիկ հէնց այն ժամանակ, երբ որ պէտք նորա նեարդները և սեռական գործունէութիւնը սաստկապէս դրգռող բոլոր պատճառների առաջն առնել, մանաւանդ որ պէտք է նկատի ունենալ, որ դպրա մանկական հասակում միշտ ընդունում են վնասակար և անբնական ուղղութիւն։ Դժբաղտաբար՝ մանկավարժները, ծնողները և մինչև անգամ բժիշկները մինչև այժմ բոլորովին ուշադրութիւն չեն դարձրել դորա վերայ և մենք ուրախ կլինէինք, որ մեր խօսքերն իզուր տեղը չանցնէին և ստիպէին բժիշկներին ճշտապէս և դիտականօրէն հետազօտելու սղոցների մեքենաների աւած ազդեցութիւնը մանկանց կազմուածքի վերայ։ Չի կարելի այս հարցին

կարևոր և մեծ նշանակութիւն չտալ, մանաւանդ երբ որ գիտես, թէ որքան քանակութեամբ մեքենաներ և պատկերներ են ծախում իւրեանց տեղում, այլև ուղարկում են գաւառները Գրօնմէյերների, Էֆօնտվիների, Գացիարօն-ների, Բէգրովների, Խակովների և սոցապէսների նման վաճառականներ, երբ որ գիտես, որ շատ գաւառական դպրոցներում այդ պատկերների և մեքենաների պակասութիւն են զգում և պատկերները շինում են նոյն իսկ իւրեանց աշակերտները, իսկ մեքենաները յանձնում են շինելու տեղական հիւսներին։

Բժիշկները յարձակվում են նաև այն չափից դուրս շատ գրաւոր աշխատութեան վերայ, որ դպրոցի մէջ վեց-եօթն ժամ նստելուց յետոյ տալիս են աշակերտներին տանը կատարելու։ Վեց-եօթն ժամ շարունակ նստակեաց պարապմունքը ինքնըստինքեան վնասակար է և առողջութեան համար, մանաւանդ երբ որ դանց են առնվում առողջապահական շատ պայմաններ. սակայն որքան արդեօք կվնասէ առողջութեանը նստակեաց պարապմունքը, երբ որ օրը նա տևում է տասնեմէկից մինչև տասներկու ժամ։ Սակայն այդպիսի երևոյթները հազուագիւտ չեն։ Մանկավարժները առհասարակ չեն խորհրդակցում միմեանց հետ, նոքա տեղեկութիւն չունին, թէ ինչ են անում իւրեանց եղբայրները, և նոցանից իւրաքանչիւրը տալիս է այնչափ գրաւոր աշխատանք, որքան ինքն է կամենում։ Ա յսպիսով յաճախ պատահում է, որ աշակերտը ստիպուած է լինում մինչեղն օրուայ բոլոր պասերի համար էլ գրաւոր աշխատանք պատրաստել։ Միանգամից կարող են պատահել երկու մեծ շարադրութիւն, մի թարգմանութիւն, մի դժուար խնդիր և աշակերտը ճարահատեալ պէտք է նստի ամբողջ օրը. մինչդեռ ամեն մի մանկավարժ առանձնապէս չի մտածում, թէ աշակերտը տուած գործերի ծանրութեան տակ ճնշվում է, ամեն մինը կածես մտածում է թէ՝ աշակերտը միայն իւր համար պէտք գաս պատրաստէ։ Ա յդ բոլորովին հակամանկավարժական է և ցոյց է տալիս մանկավարժների անհոգութիւնը, որովհետև չեն ցանկանում անել այն, ինչ որ կարելի է, որպէս զի կարելի լինի աշակերտաց աշխատութիւնը կերպարանաւորել աւելի կանոնաւորապէս և մանուկների ուժի հետ աւելի համապատասխան կերպով և ըստ այնմ հասնել այն նպատակին, որ այդ աշխատանքը միտևէ վայր ի վերոյ կերպով չհատարուէր։ Մանկավարժների այդ կերպ յարաբերութիւնը գործին, ոչ միայն խանգարում է աշակերտների առողջութիւնը, այլև վնասակար կերպով ներգործում է աշակերտի վերայ և սովորեցնում է նորան անհոգութեամբ և անուշադրութեամբ գործ կատարել. այնպէս որ աշակերտը բաւականանում է միայն գործը ինչպէս ասում են գլխից հեռացնել։ Մանաւանդ վնասակար է այդ մեզանում, որովհետև մենք առանց էն էլ ընդունակ ենք ամեն բան մի կերպ կատարելու մէջ, առանց ոչ մի բանի մէջ խորամուխ լինելու, առանց աչ և ձախ նայելու։

Բայց մանկավարժութեան ամենաթոյլ կողմը պատիժներն են։ Մանկավարժութեան այդ կողմը անմիջապէս դրութեան մէջ էր հին ժամանակնե-

սից սկսած։ Տեսրակներն ու մտածող անձինք բաւական երկար և շատ խօսեցին պատիժների վնասակարագէս ներգործութեան վերայ և հասարակութեան մէջ շատ լուրջ կերպով վիճաբանութիւններ էին լինում այն մասին, թէ ծեծել կամ չծեծել, հարուածել կամ չհարուածել, կանգնեցնել անկիւնում կամ չկանգնեցնել, պատժել ինքնակամ կերպով կամ ժողովի որոշմամբ, կազմել պատիժների աստիճաններին համաձայն օրինագիրը կամ պատժել առանց օրինագրքի։ Ինչպէս ուսուցիչները կարևոր կհամարին։ Երբէք մենք գրելու լինինք մանկավարժութեան երկիծաբանական համառօտ նկարագիրը, այն ժամանակ մենք կարող էինք առաջ բերել այստեղ այդ «լուրջ» գատողութեանց քաղուածները և ծիծաղեցնել ընթերցողին։ Բայց մենք երբէք ծիծաղելու ախորժակ չունինք, որովհետև մեզ զբաղեցնող հարցը շատ նշանաւոր է և չափից դուրս կարևոր նոյն իսկ մեր անձանց համար։ Բանը նորանում է, որ մինչև այժմ գոյութիւն ունեցող պատիժները վնասակար հետևանք են ունեցել սովորութեանց վերայ թէ ոչ։ — միշտ հակատագղջապահական են եղել և միշտ մահառիթ ու անպիտան կերպով են ներգործել մանկան կազմուածքի վերայ։ Մենք չենք սկսել խօսել այն մասին, թէ գերմանական հին մանկավարժը, որի մասին մի անգամ մենք յիշեցինք և որն որ իւր գործի մէջ տուեց աշակերտաց 911,537 փայտի հարուած, 124,010 ճկուն ոստերի հարուած և 20,989 քանոնի հարուած ձեռքերին և գործածով ի հարկէ շատ մանուկների կողերի ջարդեց։ Մենք այստեղ կքննենք միայն մի քանի առանձին պատիժներ։

Վերը առնենք օրինակ բանտը։ Բանտը առհասարակ լինում է մեկ մութ և նեղ սենեակ այսրկէն ամենից առաջ նորա կազմուածքը չէ համապատասխանում առողջապահութեան պայմաններին։ Բայց այս քիչ է։ Եւ հասարակ բանտերը վատ են տաքացնում, նոցա մէջ պնում են երբեմն աշակերտի յայտնի պիտոյից համար միայն և ամեն ծուրտը և արտաշնչութիւններով թունաւորուած օդը այնուամենայնիւ չեն օգնում մարդու առողջութեանը։ Նաև նաւոր աշակերտին տալիս են ուտելու առհասարակ հաց և ջուր, այսինքը կազմուածքը թուլանում է քաղցից։ Ա՛յս բոլոր պայմանները երբէք չեն օգնում առողջութեան զարգացմանը և չեն թոյլ տալիս յուսալ, որ բանտում նստելուց խոնջացած և տկարացած մանուկը մեծ եռանդով կկպչի ուսման հետ։ աւելի շուտ՝ նա առաւել ևս կծուլանայ։ որովհետև վերոյիշեալ պատճառով արդէն սպառուած են լինում նորա բնական ուժերը։ Բայց շարունակենք մեր խօսքը, առհասարակ աշակերտին նստեցնում են բանտի մէջ առանց գրքերի և առանց տետրակների, սակայն մինչև անգամ եթէ նա ունենար իւր հետ գրքեր և տետրակներ էլ, այնուամենայնիւ նա չէր կարող պարապել այնպիսի խաւար և մութ տեղում։ Ա՛յս պատճառով էլ մանուկը վճռում է անգործ մնալ մի որոշեալ երկար կամ կարճ ժամանակամիջոց։ Ա՛յս չափից դուրս անհետաքրքրութիւն է և մանկավարժներն էլ իհարկէ պէտք որ այս հասկանան։ Նա բաղդ ևմ ունեցած մի գիւղական դպրոցում դաս լսել ուսուցիչը չորեքշորից աշակերտին

և չարունակից պարապիլ անցաւ մի քանի րոպէ, մէկիկ յանկարծ ներս մտաւ տանտիկինը, որ դուրսը կերակուր եփելով էր զբաղուած «ի՞նչու համար դուն տիրան առանց գործի չոքիցրիլ ես, ասաց նա ուսուցչին, մինչ[ե] ես ինչպէս նա յօրանջում է ձանձրանալուց, բայց դուն լաւ կանէիր, որ նորան մի գիրք առայիր, դասը կարդար»։ Դա մի բոլորովին արդարացի նկատողութիւն էր և մանկավարժները այդ կարող էին ի նկատի առնուլ, բայց մանուկներին չոքեցնում են կէս կամ մէկ ժամով դասատան մէջ իւրեանց ընկերներից և ուսուցչի ներկայութեամբ, իսկ բանտի մէջ թողնում են մի քանի ժամ չարունակ և երբեմն ամբողջ օր ու գիշեր առանց միտրէէ վերահսկողութեան։ Ի՞նչ պէտքէ անի այդ ժամանակ անգործ մնացող մանուկը կամ երիտասարդը։ Գնի՞ պէտքէ։ Բայց չէ՞ որ չի կարելի ամբողջ օր ու գիշեր քնել, վերջապէս եթէ կարելի էլ լինի, այնուամենայնիւ այդ չար ազդեցութիւն չի գործել աշակերտի առողջութեան վերայ։ Բայց եթէ որ նա չի քնել, եթէ որ նա ոչ մի գործով չի պարապիլ, ի՞նչ էր կարծում, չի՞ մտածիլ արդեօք նա այդ ժամանակ քաւել իւր մեղքերը և քննել իւր արարքները։ Ո՛չ, և, ինչպէս այդ չենն վկայում պատերի վերայ գրուած այն տողերը որոց մենք կարդացել ենք մեր տեսած բոլոր բանտերում,—իսկ այդպիսի բաներ քիչ չենք տեսած մենք, որովհետև այդէն տասն տարուց աւելի է, որ մենք իւրաքանչիւր յարմար դէպքից օգուտ քաղելով մանկավարժութեան վերաբերեալ զանազան ինդիրների վերայ տեղեկութիւններ ենք հաւաքում և դորա համար էլ աչքի ենք անցրել այլևայլ դպրոցներ, սկսելով գաւառականից մինչև դիւղական դպրոցը և վերջացնելով հին գիմնազիական դպրոցներով և գիմնազիաներով։ Վերոյիշեալ գրուած տողերը ամենայն տարի չերմեռանդ կերպով ներկում են ներկարարները. նորա մինչ այն աստիճան անպատկառ, ցած և անեղծ լատերէն բովանդակութիւններ ունին, որ մենք չենք կարող և ոչ մինը նոցանից յիշել այստեղ. հետևապէս երիտասարդի վերայ նորա միաչութեան ժամանակ այդ գրութիւնները և միևնոյն տեղում գտնուող նկարները պէտքէ թունաւորիչ կերպով ներգործեն, անփորձ մանկան համար նորա լինում են իրրև անտակութեան առաջին դաս։ Ձենք ասում, թէ արդեօք նորա բարտարկնաչների համար մինչ ո՛ր աստիճան բարոյական հետևանքների առիթ կարող են լինել, բայց միայն կասենք, որ այդ դէպքում յաճախ նոցա կազմուածքն էլ վտանգի է ենթարկվում, որովհետև անգործութեան և միայնութեան առաջը բանտարկուածները առնում են ոչ միայն անպատկառ տողեր և պարզերգութիւններ գրելով, այլև յաճախ վերոյիշեալ պատճառներից ստիպուած գործում են նորա այնպիսի սեռական չար սխալներ, որք շատ լաւ յայտնի են մանկավարժներին, և որք դժբաղդաբար յաճախ յառաջանում են նոյն իսկ դպրոցի կազմութիւնից։ Բանտերի չինութեան ժամանակ աչքի առաջ չեն ունենում և այն հասարակ պայմանը, որ նորա պէտք գտնուին ծառայի ընակարանի մօտ, որի կարևորութիւնը անհրաժեշտ է համարում օրինակ Ցիլոը, այլ ընդհակառակն այդ-

պիսի տներըը շինվում են յաճախ պատարկ տեղերում, որով և ծառան միջոց չէ ունենում նայել բանտարկուածի վերայ և անկարող է լինում ի կարևոր դեպս օգնութեան հասնել նորան, որովհետև չի կարելի, որ բանտարկուածը յանկարծ մի որևէ վտանգի չենթարկուի և կարևորութիւն չըզգացուի նորան օգնութեան ձեռք կարկառելուց։ Առհասարակ Փիլօմի, Ցվեցի և այլ բանիմաց ու գործին տեղեակ անձանց կարծիքներին հետևձայն, բանտը ըստ մեծի մասին իրրև ուղղիչ միջոց՝ անպիտան և անօգուտ է, և նա վնասում է միշտ առողջութեանը և յաճախ արատաւորում է բարոյականութիւնը։

Լաւ չեն և միւս պատիժները, որոնցից ամենից առաջ պէտք չիշենք հարուածելը, որ թագաւորում է ամեն տեղ։ Հարուածման գործիքից, ասում է Փալկը մէջքի ուղեղի ստորին մասերում հեշտ կերպով չափից դուրս որիշն է յանգիտանում, որ չանիալանց վատ կերպով ներգործում է սեռական մասերի և ստորին անդամների գործողութեան վերայ։ Բժիշկները ի նկատի ունենալով կանանց կռնքի ոսկրների քնքշութիւնն և փափկութիւնը այդ հարուածները վնասակար են համարում նաև անչափահաս օրիորդների համար։ Երբ որ երիտասարդների սեռական հասունութեան գործողման սկիզբն է լինում, հարուածը պատճառում է նոցա սեռական դրդռումն, որ արդէն վաղուց յայտնի էր և որ իհարկէ առանց հետևանաց չի կարող մնալ թէ՛ բարոյականութեան և թէ՛ առողջապահութեան համար։ Նոյն իսկ հարուածման գործողութիւնը այն աստիճան քաղցնելի մի բան է, այն աստիճան նա միացնում է երիտասարդների և մանաւանդ օրիորդների բնական ամօթխածութիւնը, որ չի կարելի յաճախակի կրկնուող այդ տեսակ պատիժների ժամանակ երկիւղ չկրել նոցա բարոյականութեան կողմից, իսկ բարոյականութեան հետ խիստ սերտ վտանգվում է և կազմուածքը։ Այս այնքան յայտնի մի ճշմարտութիւն է, որ վերջին ժամանակներս Գերմանիայում կառավարութիւնը սաստկապէս արգելել է «հարուածելու ժամանակ մերկացնել թէ՛ տղայոց և թէ՛ օրիորդաց»։ Բայց մինչև այսօր էլ հարուածելը թագաւորում է ամենայն տեղ, իսկ Գերմանիայում հարուածելիս արգելուած է միայն հաստ ձողեր կամ փոկեր գործածելը և այդպիսով հարուածը տանջանքի փոխարկել։ Հակառակ դէպքում ուսուցիչը կպատժուի դատաստանական օրէնքով պատժի չարաչար կերպով գործադրութեան համար և նորանից կպահանջուին «վնասները», այսինքն նա իւր ծախքով կըժշկէ մանուկին։ Առ քեզ տրաքոց։

Ա՛յսպէս ուրեմն քանտերն ու հարուածները վնասակար են առողջութեան համար և շատ վատ ազդեցութիւն են գործում բարոյականութեան վերայ։ Սակայն վնասակար են նոյնպէս և միւս բոլոր պատիժները, որք ծաղկում և գոյութիւն ունին այս և այն տեղերում։ Ապտակները, ղլխին և պարանոցին խփելը, ականջներից ձգելը, քանոնով ձեռքերին խփելը, չոքեցնելը և անկեան մէջ կանգնեցնելը, սիսեռի և սրածայր ու պինդ առարկաների վերայ չորեցնելը, առանց ճաշի թողնելը,—այս բոլորը ման-

կավարժական կէտից նայելով՝ այնպիսի վայրենութիւն և գազանութիւն է, որ պէտք էր զարմանալ, թէ ի՞նչպէս կարող էին հասնել մանկավարժները այսպիսի անմտութեանց, թէ որ մենք չիմանայինք, թէ պատիժները այն բարբարոս ժամանակների մնացորդներն են, երբ որ աշակերտի ամեն մի վարմունքը համարվում էր նորա չար և յանցաւոր կամքի արտայայտութիւնը և երբ որ յանցաւոր կամքի դէմ հնարաւոր էր համարվում կռուել մարմինը չարչարելով միայն։ Անշուշտ դժուար կլինէր հասկանալ, թէ ինչ կերպով արդիւնք մանկավարժները ևկան այն եղրակացութեան, որ խանգարելով աշակերտի ֆիզիքական կարողութիւնները՝ կարելի է միջոց տալ նորա հոգեկան կարողութիւնների զօրեղապէս զարգացմանն ու գործունէութեանը։ Մի քանի խօսք նուիրենք այդ մարմնական պատիժներից մի քանիսի վերայ։

Աշակերտի գլուխը ասում է Կլենկեն, 7-ից մինչև 14 տարին լրանալը՝ կազմում է ամբողջ մարմնի շատ զգայուն մասը, որովհետև այդ ժամանակ նորա կազմութիւնը լինում է քնքոյշ և այդ շրջանի մէջ կատարվում է ուղեղի զարգացումն, որ պահանջում է սաստկապէս ժողովումն արեան, և որ աւելի առատանում է դպրոցական նստակեաց կեանքից։ Նա անվնաս չի պրծնում գլխին տուած հարուածներից և ապտակներից, որոց հետևանքը լինում է յաճախ սուր և երկարատև գլխացաւերն, իսկ երբեմն էլ դողանից աշակերտը բթամտանում է, ոչ սակաւ վնասակար են և ծոծրակին ու մէջքին հասուցած հարուածները, որք ցնցում են մէջքի ուղեղը և պատճառում են հաշմանդամութիւն և այլ վնասակար հիւանդութիւններ։ Աւելորդ է ասել, թէ ո՛րչափ վնասակար և անտեղի են այն հարուածները, որ տալիս են մատներին և ձեռքերին, այսինքն մարմնոյ հինց այն մասերին, որոնք դպրոցական պարապմունքների համար հարկաւոր են։ Անկիւնում կանգնելը գլխաւորապէս ողնաշարի սեան ծռուելու պատճառ է լինում։ Մանուկը «չի կարող» երկար ժամանակ միևնոյն դրութեան մէջ մնալ, մանաւանդ կանգնելը, այդ պատճառով էլ նա անդադար մէկ կամ միւս ոտի վերայ է յենվում և ծռում է իր իրանը։ Իսկ եթէ որ մինչև անգամ կարգի ու կանոնի տակ դրած բոլոր պատիժները վնասակար են առողջութեան համար, որքան աւելի վնասակար պիտի լինին նորա, եթէ մտաբերևլու լինինք, որ պատիժները կախում ունին մանկավարժների անսահման ու անհաշիւ կամայական կարգադրութիւններից, որոնք երբեմն իրենց տգիտութեամբ աւելի էժան են գնահատում մի աշակերտի կեանք, քան թէ իրանց սեպհական շինկի կամ ձիու կեանքը։ Բժշկական վկայութիւնների մի ամբողջ ժողովածու և նորա քննութեանց հետևանքները ներկայացնում են մեր առաջ մի ահռելի պատկեր, որից երևում է, թէ մինչ որ աստիճան բարձի թողի արած և անարգուած է մարդու կեանքը, այդ պատկերը ահռելիկ ստիպում է ակամայից մտածել մանկավարժութեան դրութեան վերայ։

«Մեր միտքն է դալիս այժմ, չարունակում է Կլենկեն, մեզ ժամա-

Նակներում տեղի ունեցած մի ամենակոպիտ վարմունք, որ յայտարարեցու արժանի է։ Մեկ երիտասարդ, դոկտոր լեզուագիտութեան, կոպիտ և լայն հատոսկր ձեռներով, որ հովանաւորութեամբ ուսուցչական բարձր ու վսեմ պաշտօնն սատնձնեց գեմնազիայում՝ ցանկալով 12 13 տարեկան մանուկների ուշադրութիւնը առ ինքն գրաւել, նա խիտում էր նոցա պարանոցին ամրապէս կծկած բռունցքով և այն մէջքի ողերի, ամենագգայուն մասին ։ Թէ քանի՞ աշակերտներ այդ հարուածներից յետոյ կարօտում էին բժշկի օգնութեանը, Կլենկեն չի իմանում, բայց նա այդպիսիներից երկուսին բժշկել է, պատժին ենթարկուողներից մի հիւանդոտ մանուկ հարուածից անզգայ վայր ընկաւ յատակի վերայ և ընկերները տարան նորան տուն նա թոյլ մնաց, հարուածի հետևանքներն եղան տեսութեան թուլութիւնը և հաշմութիւնն վերին անդամների. մի ուրիշ հարուածից խլացաւ և ըստ երևութին լաւացաւ արիւնհոսութեան ցնցուելուց, բայց հարուածի օրից սկսեալ՝ նա ստացաւ մէջքի և կեղծ մկանքներային ցաւ ու կծկումներ ոտքերի մէջ. բացի սոցանից, շարժողութեան կամ մնաւ որ լարման ժամանակ նա անդադար գանգատւում էր ծոծրակացաւից։ Մի ուրիշ բժիշկ պատմում է ուսուցչի ծեծելուց յառաջացած թոքերի բորբոքման մասին։ Բիտմանը խօսում է միևնոյն պատճառից յառաջացած թոքերի և լեարդի բորբոքման առթիւ։ Կասպերը բժշկեց մի աղջկայ, որ մի մէջից ուսուցչի բռունցքի հարուածից յետոյ կորցրել էր խօսելու ընդունակութիւնը, Օտոը առաջ է բերում մի 11 տարեկան աղջկայ մահուան դէպք, որի պատճառն եղած է քունքին տուած սաստիկ հարուածը։ Լանգենդորֆն ու Չիլբերտը նոյն օրինակ դէպքեր շատ շատ են պատմում։ Մտաբերեք Պոմեսրովսկու բուրսայի *) նկարագրութիւնը և դուք կհամոզուեք, թէ ինչ հետևանքներ կարող են ունենալ մանուկներին տուած պատիժները որոնք վնասակար են մինչև անգամ և այն ժամանակ, երբ որ նորա չափաւորապէս են գործ դրվում։

Այս պատիժների հետ իմիասին, իհարկէ, չնչին և աննշան կհամարուին և մի քանի այլ պատիժներ, որպիսիք են օրինակ՝ երկու հարիւր անգամ «ծոյլ» խօսքը գրելը, կամ միևնոյն տողը քսան անգամ արտագրել, կամ ճաշից զրկելը և այլն։ Այս բոլորը՝ ըստ երևութին չնչին պատիժները նոյնպէս վնասակար են. երեխային չի կարելի ստիպել քաղցած մնալ առանց մնասելու նորա առողջութեանը, չպէտք նորան պատժելու մտքով մի որևէ բան տալ արտագրելու, որովհետև դա աւելի շատացնում է նորա օրական աշխատութիւնը, խլում է պարտաւորիչ գասերով պարապելու ժամանակ, այսինքն ստիպում է այդ գասերը վայրիվերոյ կերպիւ պատ-

---

*) Մինչեն գարերում նշանակում էր մի շինութիւն, որտեղ բնակվում էին համալսարանականների սովորողների հետ։ Այստեղից ծագում է Bursarii, Bursales անունը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի տուն, որի մէջ բնակվում են ամենագատն վճռակի մէջ ոգեր։ Այդպիսի մի տուն ունի Կիևի հոգեբոր ճեմարանը։

թանալով և կրկին անդամ պատժի ենթարկուելով, և վերջապես միևնոյն խօսքի կամ նախադասութեան արտագրութիւնը բթամտացնում է աշակերտին։

Մենք ոչ մանկավարժական և ոչ բժշկական քննութիւն ենք գրում, գորա համար էլ աչքերդ ենք համարում մանրամասնութեանց մէջ մտնել և բացատրել այն մի տեսակ պատժի վնասը թէ մանկավարժօրէն և թէ առողջապահօրէն։ Մենք կամենում ենք միայն ասել ընթերցողներին, թէ իբրաքանչիւր մի մանկավարժական սկզբունք իւր արժէքը կունենայ միայն ժամանակ, երբ որ նա արդարացի նկատուի և առողջապահական տեսակէտով։ Մենք կամենում ենք ասել, որ մանկավարժների ընդունած իւրաքանչիւր հակառողջապահական սկզբունք չի կարող մանկավարժական իմաստասիից սկզբունք համարուիլ։ Մի ուրիշ օրինակ էլ վերցնենք։ Շատ ժամանակ չէ, որ մանկավարժները և այն՝ համբաւաւոր մանկավարժները, շինում էին Պրուսսիայում ուսուցչական սեմինարիաների համար ծած. կուած տներ, և ասում էին, որ այդ դպրոցների աշակերտներին պէտք կերակրել անպատճառ կիրակով, հագցնել բարակ հագուստ և ցուրտ ժամանակ տեղաւորել նեղ դպրոցում, շատ չբնացնել տիղաշորերի վերայ, լոյսը չթացուած վարձնել, չափազանց շատ պարապմունք տալ և այս բոլորը պէտք անել նորա համար, որովհետև «այդ մարդիքը ապագայում էլ պէտք կոպիտ վճանք վարձն, որի համար նոցա պէտք առաջուց պատրաստել»։ Ըստ երևոյթին այս դատողութիւնը շատ տրամաբանօրէն է արտայայտուած. մարդուս առաջուց՝ այսինքն երեխայութիւնից պէտք պատրաստել կոպիտ վճանքին, վճանքի լիակատար գրկողութիւնը, որովհետև քնքշակեացը կիսատակուի վնիստ վճանքի հարուածներին տակ։ Իսկ ինչ է առում առողջապահութիւնը։ Մարդուս կազմուածքը ունի իւր յատկանի պիտոյքները, ասում է նա, և ոչ միևն այդ պիտոյքներից առանց բաւականացուցման կարող է մնալ առանց պատժի։ Եթէ որ մարդու մի օրուայ պիտոյքը չլրացնուի, այն ժամանակ դորա հետևանքը թէ այսպէս և թէ այնպէս կերևի մարմնի ղուզը կազմուածքի վերայ իբրև ֆիզիքական պակասութիւններ։ Իսկ մարդուց նորա լնական պիտոյքներից միևը՝ անկարելի է։ տուէք մարդուն այնքան օդ, որքան նորա թոքերին կարևոր է, ապա թէ ոչ՝ այդ թոքերը վատ կերպով կաշխատեն և կիանդարեն ամղուղ մարմնոյ կազմուածքը։ տուէք ստամոքսին կարևոր քանակութեամբ ջուր և աննդալից կերակուր, ապա թէ ոչ՝ այդ ստամոքսը վրէժխնդիր կլինի և չի թոյլ տալ ձեր դլխին առողջ կերպով մտածել և դատել։ տուէք մկանունքներին կարևոր չափով ֆիզիքական աշխատանք, բայց մի տանջէք նոցա միևչև դադրածութիւն, ապա թէ ոչ այդ մկանունքները ոչ մի բանի պէտք չեն լինիլ և նոցա պատճառով հիւանդոտ դրութեան մէջ կընկնի նևարդային համակարգութիւնը։ Մի դրդեք սեռական դործարանները, բայց որշեալ միջոցում թոյլ տուէք նոցա լրումն տալ իւրեանց պէտքերին, և իզուր տեղը մի աշխատեք մեռցնել այդ պէտքերը, ապա թէ ոչ՝

այդ գործարանները անբնական ճանապարհով կկրաչնեն իրանց պէտքերը և այդպիսով կմեռցնեն մարդու մտաւոր և ֆիզիքական կարողութիւնները։ Մանկավարժները չկամեցան ճանաչել առողջապահութեան այս պահանջները այն ժամանակ, երբ նորա խօսում էին մարդուս զրկանքներին վարժեցնելու կարևորութեան մասին. դորա համար էլ նոցա սկզբունքները չէին հիմնուած մանկավարժութեան վերայ, այսինքն նորա իսկապէս առաջնորդում էին դէպի այն հետևանքները, դէպի ուր ո՛չ երբէք կարող է առաջնորդել մանկավարժութիւնը. համբերատար, առողջ, խելօք և աշխատասէր մարդոց փոխանակ դուրս էին գալիս թեմեւ, սակաւարիւն և հիւանդոտ, բլամիտ և նիրհոտ, իւրեանց գործը կիսատ պռատ կատարող և արհամարհող մի որևէ անձի աշխատանք. Բայց մենք մինչև այժմ քիչ ենք մտածում ո՛չ միայն մանկանց, այլև մեր սեպհական առողջութեան մասին։ Մենք արդէն վաղուց չէ որ լսել ենք մէկ ո՛չ շատ յիմար մադուց, թէ մինչին դասակարգը ժողովրդի «աւելորդ» հասկացողութիւն ունի իր առողջութեան համար և թէ աւելի լաւ է մտածել մտաց՝ քան թէ ստամոքսի առողջութեան մասին։ Այդ պարոնը այդպիսի մի լուրջ դատողութիւն յայտնելուց յետոյ չմտածեց անգամ, որ հիւանդ ստամոքսով նա երբէք առողջ միտք չի կարող ունենալ։ Բայց մեծամասնութիւնը հենց վերոյիշեալ պարոնի նման է նայում գործին և կարծէք թէ նա ուղեղը մարդու կազմուածքից դուրս մի բան է համարում, որպէս թէ նա ոչ մի կապ չունի ստամոքսի, նեարդերի և արեան հետ։ Տասն տարի սորանից առաջ, երբ որ ես տպագրեցի իմ առաջին բօմանը, մի կրիտիկոս անարդում էր ինձ նորա համար, որ ես այդ իմ բօմանով աշխատում եմ ապացուցանել հասարակութեանը շահախնդրական ուղղութեան կարևորութիւնը կրթութեան մէջ, նա չէր սխալվում։ Հենց դորա համար էի աշխատում ես այն ժամանակ. հենց դորա համար էլ կաշխատեմ ես այժմ։ Այո՛, կրթութիւնը շահախնդրական պիտոյ է լինի, նա պէտք միջոց տայ երիտասարդին վիճակատար կերպով զարդացնել իւր բոլոր մտաւոր և մարմնաւոր կարողութիւնները, որպէս զի դորանով կարողանայ օգուտ տալ թէ իրան և թէ հասարակութեանը։ Հատերը մինչև այժմ մտածում են, թէ շահախնդրական կրթութիւնը ասում է մարդուս. «դողացիր, դողացիր և կլինիս հարուստ»։ Դա չարաչար սխալ կարծիք է։ Շահախնդրական կրթութիւնն ասում է. «Եթէ դու կդողանաս, այն ժամանակ քեզ բանտը կնստեցնեն. իսկ եթէ դու կխուսափես նորանից, այդ կլինի միայն նորա համար, որ քո մերձաւորները կլինեն անզարգացած, ծոյլ և անհոգ, բայց դորա վերայ չի կարելի յոյս դնել։ Իսկ եթէ դու կամենում ես բաղտաւոր լինել, ուրեմն զարգացրու քու մտաւոր և ֆիզիքական ուժերը, որ կարողանաս առանց ոչ ոքից կախում ունենալու՝ ապրել քու աշխատանքով։ Միայն ֆիզիքապէս և մտաւորապէս բոլորովին առողջ լինելով դու կարող ես թէ քեզ և թէ հասարակութեանը օգտաւէտ լինել, այլապէս դու կլինիս կամ գատարկապորտ, կամ գող, կամ ուրիշներին հարստահարող և ամեն մի րոպէ եր-

կիւղի մէջ կլինիս, թէ այդ ուրիշները մի կերպ թէ այսպէս և թէ այնպէս աշխատում են ազատուիլ քեզանից, հոր փորել քեզ համար»։ Ահա թէ ի՞նչ է ասում շահախնդրական կրթութիւնը, իսկ դպրոցների վերայ առողջապահութեամբ այդ կրթութիւնը երբէք տեղիք չունի և աներևակայելի է, որովհետև հիւանդ մարդը չի կարող օգտակար լինել ո՛չ իրան և ոչ էլ ուրիշներին։

Սակայն ո՞ւմն է մնասում մանկավարժութիւնը իւր անխոհեմութիւններով։

Երեխաների՞ն միայն։

Ո՛չ, նա միայն նոցա չի մնասում. նա մնասում է ինձ, ձեզ, ամբողջ հասարակութեանը և ամբողջ տէրութեանը։ Իւրաքանչիւր բթամիտ և հիւանդ մարդ մի բեռն է տէրութեան, հասարակութեան, ձեզ և ինձ համար։ Նա ո՛չ միայն կարող է դատարկապորտութեան վիճակին հասնել, այլ և անդադար կթմրեցնէ ամբողջ հասարակութեանը և մի առանձին մասնաւոր անձի գործունէութիւնը։ Բթամիտ և հիւանդ մարդը ո՛չ միայն չի կարող գործաւէր մարդ լինել, բայց նա չի կարող մինչև անգամ ինքնուրոյն կերպով ընթանալ գործ սկսող մարդկանց քամակից—նորան պէտք թրևեցնել, նորան պէտք անվն քան պատրաստի տալ։ Աշխատեցէք դարձնել մարդուն մտաւորապէս և ֆիզիքապէս առողջ մի էակ և հաւատացէք, որ նա աւելի կարողութիւն և այժ կունենայ պատերազմել բոլոր անյաջողութիւնների և վրկանքների դէմ, քան թէ նա, որին դուք երեխայութիւնից սովորեցրիլէք տանել այդ վրկանքներն ու անյաջողութիւնները։ Դուք կասէք ինձ թէ այդ ճշմարիտ չէ, և թէ թարմ օդից ածխահոտ սենեակ մտնող մարդը աւելի շուտ կմեռնի, քան թէ նա, որ նոյն իսկ ածխահոտութիւնն տարածուելուժիջոցից գտնվում էր այդ սենեակում։ Դուք իհարկէ այդ ճշմարտութիւնը հանեցիք Լիբիխի «Մարդակազմութիւն առօրեայ կեանքի» գրուածից։ Եւ դուք կարծում էք թէ այդ պատասխանն է։ Բանը նորանում է, որ ածխահոտ սենեկում ֆիզիքապէս անկարելի է ընակուիլ։ Կնշանակէ ո՞ր ամբողջ հարցը կայանում է նորանում. թէ արդեօք աւելի լաւ է մնալ միանգամից՝ թէ, իմանալով մահուան անխուսափելի լինելը՝ երկար ժամանակ չարչարուիլ հաշմանդամ դրութեան մէջ.—այս դէպքում ահա ես նախադասում եմ առաջինը, թէև կրկին պէտք ասել ձեզ, որ առողջ մարդը մնալով ածխահոտ սենեակ, ամենից առաջ կշտապէ բաց անել դռներն ու պատուհանները և մաքրել օդը։ Իսկ նա՝ որ ածխահոտութեան նոյն իսկ սկզբից սենեակումն էր գտնվում՝ հանգիստ և խաղաղ կերպով կքնի, չիմանալով որ ինքը քնում է մահուան քնով, և մինչև անգամ նրէ նա զգայ էլ այդ, այնքան զօրութիւն չի ունենալ վերկենալ և բաց անել դռներն ու պատուհանները։ Իսկ ո՞վ կլինի արդար դո՞ւք՝ թէ ես։

Մենք գլխաւորապէս խօսեցինք դպրոցների վերայ և երկարօրէն ոչ մի բան չասացինք այն պայմանների մասին, որոնցով կապկանում են մանուկներին տան մէջ։ Բայց թող չկարծէ ընթերցողը, որ այդ մենք արինք նորա համար, որ կարծում ենք իբրև թէ մանուկը իւր ընտանեաց մէջ աւելի լաւ

հանգամանքների մեջ է գտնվում և թէ նորա առողջութիւնը այնտեղ պահպան վնասների է ենթարկվում։ Ա՛յս ծանր ընտանեաց մեջ մանկանը սպասում են աւելի վատթար պայմաններ ու հանգամանքներ։ Բայց մենք նոցա մասին ոչինչ չասացինք այն պատճառով, որովհետև ցանկանում էինք ցոյց տալ, թէ մինչ ո՛ր աստիճան անհոգ են թողնում մանուկներին մինչև անգամ և այնտեղ, ուր՝ ըստ երևութին մարդիկ պարտական պիտի լինէին մանկանց կրթութեան համար պահանջուած բոլոր կարևոր բանները աչքի առաջ ունենալու և հեռացնել նորանից նորա ֆիզիքական և մտաւոր բարգաւաճմանը վնասող և խոչընդոտ եղող բոլոր պայմանները։ Եթէ որ դպրոցներում, որոց միակ նպատակն ու նշանակութիւնն է փրկել մանուկներին բարոյական և ֆիզիքական անկումից, այդպէս քիչ են մտածում առողջապահութեան և մարդուս կազմուածքի պահանջների մասին, ուրեմն պարզ է, որ այդ մասին աւելի քիչ հոգատարութիւն կունենան այն մարդիկ, որոնք չաճախ զուրկ են դաստիարակի դեր կատարելու համար պահանջուած կարևոր պատրաստականութիւնից։ Խեղճ, անկիրթ և չզարգացած ծնողները աւելի չաճախ՝ քան մանկավարժները վնասում են նոցա, որոց իրանք կեանք են պարգևել։ Ծաճախ մանուկները դպրոց են մտնում արդէն փչացած, ընկճուած, բթացած և բարձի թողի արած ժամանակներում, այս դէպքում թէ դպրոցը և թէ մանկավարժները զարգացման ամենավերին աստիճանի վերայ պիտի լինին կանգնած, որ կարողանան ուղղել այդ տեսակ մանուկներին։ Դժբաղդաբար դպրոցը իր այժմեան դրութեամբ բոլորովին անկարող է կատարել այդ սուրբ պարտականութիւնը։

Բոլոր վերևը ասածներից լիապէս պարզվում է մանկավարժների և բժիշկների յարաբերութիւնը։ Ոչ մի պետութիւն ամբողջ կոպեկով չի օգնել դաշտային բժշկութեան։ Այդ շաղկապը միայն կարող կլինի պարզել այն բոլոր հարցերը, որ վերաբերում է յառաջացող սերնդի առողջութեանը և որոնք մնում են այժմ մոռնի և անվճռելի։ Բժիշկների և մանկավարժների ընկերութիւնները կամ ժողովները, նոցա ուսումնական ճանապարհորդութիւնները, նոցա քննադատելի խնդիրները, հետազօտութեանց փոխանակութիւնը, բժիշկների դպրոցների վերայօք արած քննութիւնները, դպրոցական շինութեանց յատակագծերը, կանոնաւոր հաստատումն դպրոցական կաղապարների, այս բոլորը՝ կարող է առաջ մղել գործը, որ ունի ամենամեծ նշանակութիւն հասարակութեան համար։ Բայց այս քիչ է։ Նոյն ինքն հասարակութիւնը իրրև կրթութեան գործին հետևող մի ամբողջութիւն, պէտք ներկայացնի իր դատողութիւնները, առաջարկէ իր գործնական նկատողութիւններն ու զննութիւնները։ Այդ օրինակ ընկերութիւնը՝ նման բոլոր ուրիշ հաստատուած գիտնական ընկերութեանց, կարող է կրկնակի օգուտ ունենալ։ Նա բացի անընդմիջական օգտից, որ կտայ թէ հասարակութեանը և թէ կառավարութեանը մանկավարժական և առողջապահական հարցերը վճռելու վերաբերութեամբ, կարող է և անդամակցական տուրքերից կազմել ուսուցիչների որբոց, որբերի և ամենաչքաւոր աշակերտներին օգ-

նելու համար մի դրամարկղ։ Մեզ կասեն, թէ մեղանում կայ արդէն մի մանկավարժական ընկերութիւն, սակայն նախ և առաջ այդ ընկերութեան անդամները միայն մանկավարժներ են։ Նորա մէջ չկան անդամներ ո՛չ բժիշկներից և ո՛չ մասնաւոր անձինքներից։ Երկրորդ՝ այդ ընկերութեանը պատկանող հարցերը շատ նեղ շրջանի մէջ են պատուում։ Այնտեղ համարեա թէ հարց չի բարձրանում ո՛չ դպրոցական առողջապահութեան և ո՛չ դպրոցների շինութեանց ձևի վերաբերութեամբ։ և որ շատ հասկանալի է, որովհետև անդամների թուի մէջ չկան ոչ բժիշկներ և ո՛չ ճարտարապետներ։ Երրորդ՝ մինչև անգամ և այն քննադատելի ելդիրները, որ կարդացվում են այդ ընկերութեան մէջ՝ հասարակութեան ականջն է հասնում լրագրական կցկտուր յօդուածների շնորհիւ և մոտացվում է նոյն իսկ երկրորդ օրում, իսկ երբեմն էլ հասարակութիւնը բոլորովին չի էլ կարդում, որովհետև նա մինչև անգամ կարևոր չի համարում հրատարակել այնպիսի ամսագրեր կամ ժողովածուներ, որտեղ տեղաւորուէին նորա նիստերի բոլոր քննադատելի ելդիրները և հաշիւները։ սակայն կարելի է թէ նոյն իսկ ինքն ընկերութիւնը իւր նիստերին այնքան նշանակութիւն չի տալիս, որպէս պի արժանի լինէին նորա ընդհանուրի գիտակցութեանը հասցնելու, դորա համար էլ բաւականանում է խօսել ու դարձեալ խօսել իւր ժողովի մէջ թէյ խմել և հանգիստ կերպով վերադառնալ տուն, ընդ նմին և երեկոյեայ պատահածը վաղը մոռանալով։ Չորրորդ՝ այդ ընկերութիւնը դրամարկղ է կազմում ուսուցիչների օրեցք, որպէսի, կարօտութեանց մէջ ընկած աշակերտների օգնութեան համար, հոգատարութիւն չունի մրցանակ նշանակելու դպրոցական շինութեանց լաւ յատակագծերի, նստարաններու, գրասեղանների և այլ այսպիսի պարագաների համար։ Հինգերորդ՝ որ ամենանշանաւորն է - նա չի կարող լինել մինչ այն աստիճան նշանաւոր և գաղափարական, որպէս դի նորա դատած և վճռած մի որ և է խնդիր կեանքի մէջ առնուէր ի գործածութիւն, ընդունուէր և կառավարութեան, զեմշտվօների և մասնաւոր անձանց կողմից, դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի խօսակցութեան տուն որ թողնում օդի մէջ բարձր մտքերի օճառեայ փամփուշտներ, որ մի րոպէի մէջ պայթում են և չեն թողնում ոչ մի հետք։ Ահա թէ ինչո՞ւ համար մենք կարևոր ենք համարում հիմնել մի ուրիշ «հասարակօգուտ մանկավարժական» ընկերութիւն, որ հիմնուած լինէր բոլորովին այլ հիմանց վերայ։ Քանի որ բժիշկները, մանկավարժները և հասարակութիւնը իրարից հեռու կմնանգան։ Թշնամական աչքով կնայեն միմեանց վերայ։ — այնքան էլ առաջ եկող սերնդի առողջութիւնը կսկսի աւելի և աւելի վտանգուիլ և հիւանդոտ հայրերից կծնուին հիւանդոտ զաւակներ։

«Дѣло» ամսագրից Բարդ. Մակար Տէր Սարգսեան.

ԱՋՔԱՅԻՆ

Ջատկի Կիւրակէ օրը նուրբ Պատարագէն անմիջապէս յետոյ Վեհափառ Հայրապետեան ազգիս Միաբանութեանն նախընթացութեամբ Եկեղեցւոյ Վեհարան ելաւ. Ընդունելութեան Դահլիճում, ի շնորհաւորութիւն Յիսուսի Տեառն մերոյ Յարութեան, ազ տուեց Միաբանութեանն և շնորհաւորելով Նուրբ Յարութիւնը՝ օրհնեց բոլորին. ընդունեց Վաղարշապատոյ դիւանատունց գլխաւորներին և առանձնաց անձանց և նոցա ևս ազ տալով ու օրհնելով՝ բոլորին միասին առաջնորդեց դէպի Ամենայնի Դահլիճը՝ ուր պատրաստած էր սեղան. Վեհափառ Հայրապետը օրհնելով սեղանը՝ տեղի տուեց գարձեալ դէպի Ընդունելութեան Դահլիճը, ուր ընդունելով ի շնորհաւորութիւն Նուրբ Յարութեան Քրիստոսի՝ եկած բազմաթիւ ժողովրդեան. ընդունեց նաև Ձեմարանի և Վաղարշապատի երկսեռ պարոցաց աշակերտներին, յօժարութեամբ ունկն մատուցանելով հետևեալ ճառերին՝ որ կարդացին Վաղարշապատու պարոցաց աշակերտներից երկուսը՝ ի կողմանէ իրանց բոլոր ընկերակցաց. Վեհափառ Հայրապետը ըստ պատշաճին քաջալերեց և օրհնեց բոլորին ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի:

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ԵԻ ԲԱՐԻ ՀԱՑԻՐ.

Թոյլ տուէք մեզ մանուկներիս գալ Քիստոսի նուրբ Յարութեան օրում համբուրել Ձեր Օծեալ Նուրբ Ձեռը, շնորհաւորել Քիստոսի հրաշալի Յարութիւնը, որով մարդիկ մեռելութիւնից դէպի կեանք փոխուեցին, որով նախածնողների յանցանքից ազատուելով՝ որդեգրուեցին երկնաւոր Հօրը:

Վեհափառ Տէր, այժմ մենք ուրախութեամբ զուարճանում, խնդում ենք, որովհետև բաղդ ունենք Վեհափառութեանդ օրհնութիւնը առնելու, Քիստոսի Յարութիւնը աւետելով. և յայտնելու մեր սրտի անբաւ շնորհակալիքը՝ այն երախտեաց համար, որ մենք, մանուկներս վայելում ենք Ձեր շնորհիւ բացուած դպրոցներում, որոց փակ ժամանակ՝ խեղճութեամբ թափառում էինք, առանց մեր ուսման ծարաւը լցնելու. Մեր ուրախութիւնը կրկնակի է. մին՝ որ, նախածնողների գործած յանցանքի տակից ազատուելով Քիստոսի Յարութեան շնորհիւ որդեգրուել ենք երկնաւոր Հօրը, միւս ևս, ուսմամբ՝ տգիտութեան խաւարից հանուելով՝ դէպի աստուածգիտութեան լոյսն ենք առաջնորդվում մեր դաստիարակների և խնամակալների շնորհիւ, որի համար միմիայն պարտական ենք Ձեզ, մեր բարի և երախտաւոր Հայր:

Ուրեմն, Վեհափառ Տէր, մեկնեցէք դէպի մեզ Ձեր Նուրբ Աջը, օրհնեցէք մեզ մանուկներիս, օրհնեցէք մեր դաստիարակներին, որ նոքա զօ-

բացած Աստուծոյ օգնութեամբ և Ձեր օրհնութեամբ, մեզ դէպի լոյսն առաջնորդելու մէջ հզօրանան, օրհնեցէք դպրոցների հոգաբարձուներին, որ իւրեանց գործունէութեան մէջ ուժ, ոգի ստանան, դպրոցների բարեզարդութեան համար։

Այժմ, մենք միայն դորան ենք կարօտ, և դորան ենք սպասում։ Մենք ևս կ'օրհնենք Ձեր կեանքը, երրայական մանուկների նման, որպէս երբեմն Յիսուսի առաջ ողջանայ էին երգում, որ դուք ևս զօրանաք Աստուծով, բռնած մեր ձեռից տգիտութեան խաւարից դէպի լոյսն առաջնորդէք. մեր նախնիքներից մեզ մնացած նուիրականութիւններին հոգւոյ զօրութեամբ և անվհերութեամբ հովանաւորէք. Հայոց ազգի և նոցա երկար դարերի ընթացքում հաստատ ու անդրդուելի մնացած եկեղեցւոյ պայծառութեան և բարեշարդութեան համար։ Ամէն։

Վաղարշապատի տղայոց դպրոցի աշակերտների կողմից կարդաց՝ Գեղամ Ասլանեան։

1887 ամի Ապրիլի 5 ին
ի Վաղարշապատ։

ԽՆԱՄԱԿԱԼ ՀԱՅՐ ՄԵՐ

ԵԻ ԲԱՐԻ ՏԷՐ.

Այսօր անպատում ուրախութեամբ լցուած մեր՝ Վաղարշապատի օրիորդական դպրոցի աշակերտուհիներիս մանուկ սրտերը, դիմաւորում ենք Ձեզ, մեր անզուգական Բարերարին, շնորհաւորելու Փրկչի Ս. Յարութիւնը՝ որի շնորհով ամբողջ մարդկութիւնը ազատուեց դառն վիճակից՝ մեղքի դատապարտութիւնից, և մի առաւել լաւ վիճակ փոխադրուեց։ Օրհնուած լինի Յիսուսի Ս. Յարութիւնը։

Դիմաւորում ենք Ձեզ, Հայր բարի, յայտնելու Ձեր դէպի մեզ ունեցած անհուն երախտեաց համար մեր մատաղ սրտի շնորհակալիքը, որ Ձեզանով պիտի ազատուենք տգիտութեան խաւարի բռնութիւնից և Ձեզանով պիտի առաջնորդուենք դէպի գիտութեան լոյսը։ Թող օրհնուած լինի այդ օրը։

Խնամակալ Հայր, ուսումնարանների բացումն մեր մէջ զարթնեցրեց ուրախութեան ոգի, մենք մանուկներս աւետեցինք միմեանց ուրախանալով՝ որ պիտի նոր ի նորոյ դպրոցի շէնքից ոտքներս ներս դնենք մեր ուսման ծարաւը լցնելու, օրհնուած լինի Աստուած, որ այդ օրին արժանացրեց։ և ահա մեր մանուկ սրտերի անկեղծ շնորհակալեաց հաւաստիքը, մեր ձեռքերի վաստակոց առաջին պտուղը Ձեզ ենք մատուցանում՝ ընդունեցէք ուրեմն, Խնամակալ Հայր, և օրհնեցէք մեզ և մեզ վերայ բարոյապէս մնացողներին և նիւթապէս օգնողներին, որ մենք ամենքս միակերպ զօրանանք Ձեր օրհնութեամբ Աստուծոյ երկիւղի, Ազգի և Եկեղեցւոյ սիրոյ մէջ. ամէն։

Վաղարշապատի օրիորդաց դպրոցի աշակերտուհիների կողմից կարդաց՝ Հռիփսիմէ Մելիք-Վրդանեսեան։

Վաղարշապատ։

ԱՅԼ ԵԻ ԱՅԼԿ

Շնորհակալութեամբ ստացանք
Ա. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ
(Պետերբուրգից ուղարկուած երկու թղթակցութիւնների առիթով)
Առիպողական բացատրութիւններ
Ս. Յարութիւնեան։

Տպուած է Թիֆլիզում Յովհաննէս Մարտիրոսեանի տպարանում 1887։

Բ. ՓՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ. երգեր, պարերգեր և աղօթքներ փոքրահասակ մանուկների համար.

Հայնագրեց Ղազարոս Փահ. Ծոմակփեան.

Վաճառվում է Ս. Սուքիասեանի երաժշտական գրախանութի մէջ Թիֆլիզում. տպուած է Ս. Պետերբուրգ, Ի. Ն. Սկորոխոդովի տպարանում 1887.

Երգարանը կազմել ու հայնագրել է Արժ. Ղազարոս Փահ. Ծոմակփեան, ներդաշնակել, կանոնաւորել և տպագրութեան հանել է Դպ. Մակար Եկմալեան. երկուքն էլ Մայր Աթոռոյս ժառանգաւորաց դպրոցից են և Հանգ. Նիկողայոս Թաշճեանի վարժ աշակերտներից. Ցաջողութիւն ենք ցանկանում երկուսին էլ իրանց սիրած առարկայում. տակուն ջանասիրութիւն՝ Հայկական Հայնագրութիւնը և աղգային երաժշտութիւնը ընդհանրացնելու գործում.

Փնարիկ մանկականը հայնագրուած է եւրոպական հայնանիշներով. մենք յաւակնութիւն չանձն չենք առնիլ Հայկական նորաբողբոջ հայնագրութիւնը Եւրոպականի հետ ի կշիռ դնել. բայց վստահաբար կասենք. եթէ «Փնարիկ մանկական» երգարանը Հայ մանուկների համար է, պէտք էր Հայկական Հայնագրութեամբ լինէր, որ իրրև պատասխրիչ առարկայ հայ հոգևոր դպրոցներում, աւելի մտածելի է.

Բոլոր հայնագրուած երգերը 27 հատ են, որոնք առանց հայնագրութեան ութ երես են բռնել, միայն մի մի տուն հայնագրութեամբ՝ չկ երես, և այսպէս ընդհայա կազմն ու յառաջաբանն հետը հաշուած 38 երես միջակագիր մի գրքոյկ գնահատած է Եղիա Քոբէ. Մինչդեռ Հայկական Հայնագրութեամբ նոյն ծաւալն ունեցող մի գրքոյկի մէջ կարելի էր եռաստիճը տեղաւորել և եռաստիճ պակաս գին նշանակել, որով և դիւրութիւն տալ ցանկացողներին դիւրաւ ձեռք բերելու. Այս հանգամանքը յայտնի է նոցա՝ որոնք տեսել են եւրոպական հայնանիշներով տպեալ երգարաններ և գիտեն նաև Հայկական հայնագրութիւնը.

Հայկական հայնագրութիւնը տեղն կարելի է համարել Եւրոպական հայնագրութեան, այն տարբերութեամբ միայն՝ որ Հայկական հայնագրութեան մէջ հայնաստիճանը որոշվում է տառով և մի գծի վերայ ուղիղ գրուելով որպես մի հասարակ տառ՝ աւելի սակաւ տեղ է բռնում և աւելի դիւրին է թէ գրելը, թէ տպելը և թէ երգելը. Եթէ Հայկական հայնագրութեան մէջ կան անհարթութիւններ, դոքա էս կուղղուեն հմուտ և ճաշակագէտ սիրողների ջանքով.

Գ. «ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒ ՀԱՑԵՐԻ ՄԷՋ». (պատմական նիւթեր) Հ. Ղուկասեանց, տպած է Թիֆլիզ Մ. Ռօզինեանցի տպարանում 1886.

Այս հետաքրքիր աշխատասիրութեան մէջ խոհական խնամքով պատկերացրած է կովկասեան հայերի մէջ բողոքականութիւնը տարածելու գործում հայատակողների և նորան դիմադրող ախոյեանների ջանքերը. Ափսոս որ այս անգամ տեղւոյս անձկութեան պատճառով պիտի չկարողանանք ընդարձակօրէն խօսել այս հետաքրքիր աշխատասիրութեան վերայ. Թերևս յաջորդ մեզ հարևանցի կերպով համառօտել գրքի բովանդակութիւնը մեր ընթերցող ներին.

Գրքի գինն է 50 կոպէկ.

ՑԱՎԱԼՆԱՆԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԶԱՐԵՑՒ ՏՐՈՒԹԻՒՆ։

Հանգեաւ ի Տէր։

Հանգուցեալը ձեռնադրուել է Աբեղայ ի միաբանակցութիւն Տաթեւու վանից, և զանազան պաշտօնավարութեամբ՝ Հոգ. իշխանութեան համարումը միշտ վայելել է և վարձատրուել է վարպետական ականակուռ լանջական խաչով ու ծաղկեայ փիլոնով։

Հանգուցեալը բաց ի Տաթեւու վանքի վանահայրութիւնից և նոյն վիճակի յաջորդութիւնից՝ Մայր Ամոռումն վարել է զանազան պաշտօններ, վանահայր է եղել նաև Արգեազու Ս. Խաչ վանից։ Անցեալ 1886 թուին Տաթեւու յաջորդութիւնից արձակուելով՝ եկաւ Մայր Ամոռս և տարւոյս սկզբից կարգուեց Վանական կառավարութեան անդամ։ Աւելի քան մի ամիս նկատելի կերպով մաշուածքը լեարդի և կրծքային հիւանդութեամբ և ամսոյս 20 ից մահիճ մնալով ամսոյս 25 ին, շաբաթ՝ լոյս կիւրակէ գիշերը 11 ժամին կնքեց մահկանացուն ի հասակի վաթսուն ամաց, և պատշաճաւոր յուղարկաւորութեամբ ամփոփուեց Մայր Ամոռոյս միաբանութեան գերեզմանոցում։

Հանգիստ և երկնից արքայութիւն նիք մաղթում Հանգուցելոյն և Սուրբ Հոգւոյ մխիթարութիւն վշտադնեալ սրտերին։

Ընութիւնք Հայրենեաց	—	40
Հռոմէական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	30
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն թեմական տեսչաց	—	20
Ձայն բազմաց	1	—
Ձայնագրեալ երգոցողութիւնք Ժամագրոց	8	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	3	—
Ձայնագրեալ շարական յԵ–ոյ	60	—
Ճանապարհորդութիւն Հակոտհատուղէնի	—	80
Ճաշոց	60	
Մաղթանք վասն Հայրապետի աղգիս	—	20
Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ճաւելուած Ժամագրոց ձայնագրեալ	—	20
Նախակրթանք Բ. մասն	—	45
Նոյն Գ. մասն	—	50
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	20
Ուղղագրութիւն	—	50
Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ	—	40
Պատմութիւն Խաչակրաց	—	30
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	30
Պատմութիւն Հռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերաբեր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	1	—
Սաղմոս Դաւթի	1	—
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	50
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Մշեցւոյ և Վանեցւոյ	—	30
Օրացոյց (1887)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Աստղանիշ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 րուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղջումն կը լինի 20°/₀ին (ճանապարհածախքը գնողի վերայ)։

„ԱՐԱՐԱՏ“

ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը տարեկան է և սկսւում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 րուբլի. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 րուբլի, Հնդկաստանում 6. ր.

Ծրագիրն է

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Արարատում կը հրատարակուեն նաև Վեհափառ Կաթուղիկոսի և Սինօդի կողմից եղած վարչական այլ և այլ հրահանգութիւնները և Սինօդի օրագրութիւններից քաղուածներ։

Արարատում կը հրատարակուեն յիշատակարաններ՝ իբրև պատմական աղբիւր. կարոտտպուեն լրագրներից իւր ուղղութեանը յարմար յօդուածները, զետեղելով ըստ բովանդակութեան։

Կը հրատարակուեն նաև լուրեր «Այլ և այլք» վերնագրով։

Հայաբնակ քաղաքներում և գաւառներում ստորագրուել ցանկացողները թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին. Հասցէն Эчміадзинъ. Типогр. Комитетъ—Տպարանական Ժողովին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տպար. ժողովս խնդրում է Մոզդոկի, Գրիգորիօպօլու, Թէոդոսիոյ, Խարասուբազարի, Ս. Խաչ քաղաքի, Կողբի, Կարուց, Մեղրուայ, Շարուրի, Թալինու, Գօրուայ Լօռւայ, Ղօշունլուի, Մելիտօպօլի գործակալներից շուտով հասցնել Արարատի ներկայ տարւոյս բաժանորդաց ցուցակն, որոց ուղարկուեցին Յունվար և Փետր. ամսագրերն անցեալ 1886 ի համաձայն։